ՀՀ ԳԱԱ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ ՎԻՈՒԼԻ

ԱՆՀԱՏԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐԸ 20-ՐԴ ԴԱՐԱՎԵՐՋԻ ԵՎ 21-ՐԴ ԴԱՐԱՍԿԶԲԻ ԱՆԳԼԱԱՄԵՐԻԿՅԱՆ ԱՐՁԱԿՈՒՄ

(ԿԻՆ ԳՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)

Ժ.01.07-«Արտաահմանյան գրականություն»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների
դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2017

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտում

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր
Արա Առաքելյան

բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր
Ալվարդ Ջիվանյան

բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր
Կառլեն Մատինյան

Առաջատար կազմակերպություն՝

Հայկական պետական մանկավարժական համալսարան
Խ. Աբովյանի անվան

Պաշտպանությունը կայանալու է 2017 թ. հոկտեմբերի 20-ին, ժամը 12.30-ն ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում:
Հասցեն՝ Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թ. սեպտեմբերի 19-ին

Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար՝ բանասիրական գիտությունների թեկնածու՝ Ս. Ա. Մարգարյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գեղարվեստական գրականության առաքելություններից մեկը որպես գեղարվեստական հայեցակարգի և արժեքների (իմացական, գեղագիտական, փիլիսոփայական, բարոյաէթիկական և այլ) միաձուլման «տարածք» ներկայանալն է: Այս հարացույցում առավել կարևորվում է գրողի, հեղինակի դերը՝ որպես գեղագիտական հայացքների և արժեքային այն կողմնորոշիչների կրողը, որոնք արտացոլվում են իր ստեղծած գեղարվեստական իրականության շրջանակներում՝ կերպարների, պատումի, լեզվի և ոճի միջոցով:

«Կանանց արձակ»[1] հասկացությունը երկար ժամանակ է, որ գոյություն ունի, սակայն փաստացի այն ձևավորվել է համեմատաբար վերջերս՝ 20-րդ դարի 80-90–ականներին, երբ ի հայտ եկան «կանանց արձակի» ամբողջական հավաքածուներ, ինչը, անկասկած, գրական նշանակալից բեկում էր:

Այսօր գիտական հարացույցում «կանանց գրականություն» կոնստրուկտի առկայությունն այլևս անվիճարկելի փաստ է, սակայն դեռևս գրականագիտական քննադատության թույլ տեղերից է: Ինչպես Ե.Վ. Լազարևան է գրում իր ատենախոսության մեջ՝ կանացի փորձի և արժեհամակարգի մոդելի կարևորության ընդունումը, համամարդկային արժեքների հետայդ մոդելի փոխհարաբերությունը, կին գրողի արժեհամակարգի համեմատությունը տղամարդ գրողի արժեհամակարգի հետև նմանատիպ այլ հարցեր առարկան են դառնում գրական քննադատական արտացոլման, առանց որոնց, չափազանցություն չի լինի հավաստելը՝ արդեն անհնար է պատկերացնել ժամանակակից ամերիկյան, արևմտաեվրոպական և ռուսական[2], հավելենք նաև՝ հայ գրական մտավորական մշակույթը: Այս փաստով էլ պայմանավորված է մեր ուսումնասիրության **արդիականությունը**:

Հետազոտության **արդիականությունը** պայմանավորված է գրականության մեջ «կանանց արձակի» և «կանացի թեմայի» գեղարվեստական մեկնաբանման, պատմական հարացույցում կանացի անհատականության գեղարվեստական և արժեքաբանական հայեցակարգերի և կանանց արձակի զարգացման բազմավեկտոր վերլուծության

---

[1] «Կանանց արձակ» և «կանանց գրականություն» հասկացություններն աշխատանքում գործածվում են որպես հոմանիշներ:

[2] Տես՝ Лазарева, Е. Иерархия ценностей в современной женской прозе. автореферат дисс…канд. филол. н.: /Е. В. Лазарева/, - Краснодар, 2009.

անհրաժեշտությամբ, ժամանակակից գրականագիտական ուսումնասիրություններում կին գրողների ստեղծագործություններում առկա արժեքային կողմնորոշիչների վերլուծության, դրանց տեղն ու դերը տվյալ ժողովրդի արժեհամակարգում վեր հանելու կարևորությամբ:

Բացի այդ, կարծում ենք, որ արժեքների աստիճանակարգման հիմնախնդիրը նույնպես այսօր խիստ **արդիական** է: Չնայած բազմաթիվ աշխարհաքաղաքական և մշակութային նորընծա միտումների ընդվզումներին՝ *բարին, ճշմարիտը, գեղեցիկը, ազատությունը, արժանապատվությունը* մնում են առանցքային այն արժեքները, որոնց իրացման մասին արդեն քանի հազարամյակ խոսում են փիլիսոփաները և մշակութաբանները, և այս հասկացությունների արժևորումը գրականությանը թույլ է տալիս պահպանել պատմի լավագույն ավանդույթները:

Կին գրողների ստեղծագործություններում առավելագույն խորությամբ են արտացոլվում բարոյաէթիկական արժեքները և կարևորվում համաշխարհային դասական գրականության ռեալիզմի և հումանիզմի ավանդույթները: Զուտ կանացի առաջնահերթություններ համարվող՝ *տուն, ընտանիք, սեր* և այլ անանց արժեքներ կին գրողների գեղագիտության հիմնարար հենքն են: Հետազոտության մեջ առանցքային է առաջադրված հարցադրումների՝ կանանց հիմնախնդրի, կանանց գրականության, արժեքների և արժեքաբանության տեսական, պատմամշակութային վերլուծությունը՝ ընդհանուր դրույթների վերհանումից մինչև կոնկրետ տեքստերի մեկնաբանում:

Ներկայացված հիմնախնդիրների ոչ բավարար ուսումնասիրվածությունն էլ գրական քննադատության մեջ պայմանավորում է սույն ատենախոսական աշխատանքի **նորույթը**՝

- առաջին անգամ իրականացվում է 20-րդ դարավերջին և 21-րդ դարասկզբին ստեղծագործող անգլիացի և ամերիկացի կին գրողների երկերի առանձին և համեմատական վերլուծություն՝ գաղափարական-գեղարվեստական մտահղացման, թեմատիկայի և կերպարային համակարգի, սիմվոլիկայի և հեղինակային արժեհամակարգերի հաշվառմամբ,
- ներկայացվում է կնոջ հիմնախնդրի և «կանանց արձակի» վերաբերյալ տարբեր տեսաբանների տեսակետները՝ դարաշրջանի հանրամշակութային համատեքստում, վերլուծվում են կանանց արձակի առանձնահատկությունները, դրանց թեմատիկան և

կերպարային կարծրատիպերը՝ պատմական հարացույցում, ընտրված հեղինակների ստեղծագործությունները համեմատվում են նախորդ դարերի կին գրողների երկերի հետ, վեր հանվում տարբերություններն ու նմանությունները,

- իրականացվում է ընտրված հեղինակների ստեղծագործությունների արժեքաբանական վերլուծություն՝ որպես հայեցակարգային հիմք ընդունելով արժեքների մասին տարբեր տեսաբանների և փիլիսոփաների տեսական դրույթները: Ներկայացվում է նաև արժեքաբանության հիմնական միավոր՝ արժեքի կառուցվածքի **նոր մոդել**՝ մշակութային-ճանաչողական արժեք հասկացությունը:

Հետազոտության **օբյեկտը**՝ 20-րդ դարավերջին և 21-րդ դարասկզբին ստեղծագործող անգլիացի և ամերիկացի կին գրողների ստեղծագործություններն են: Ուսումնասիրության համար որպես հիմնանյութ ընտրված անգլիացի կին հեղինակներ՝ **Ա. Ս. Բայեթի, Ա. Քարթերի** երկերը և ամերիկացի կին գրող՝ **Դ. Բրաունի** «Կնոջ ձեռքը» վեպը թվագրվում են 20-րդ դարի վերջին տասնամյակներին, իսկ մյուս հեղինակների՝ **Է. Գիլբերթ, Ջ,. Փիքոլթ, Դ. Թարթ,** ստեղծագործությունները՝ 21-րդ դարի սկզբին:

Թեպետ արտասահմանյան, խորհրդային և հայ տեսաբանների ու գրականագետների կողմից որոշ քայլեր արվել են կանանց հիմնախնդիրն ու կանանց արձակն ուսումնասիրելու և գիտականորեն իմաստավորելու ճանապարհին՝ կանանց ստեղծագործության և կանացի կենսափորձի, արժեքային կողմնորոշիչների ինքնատիպությունը և դրանց արտացոլումը կանացի պատումում՝ գրականագիտության ոլորտում դեռևս նոր և քիչ ուսումնասիրված թեմաէ:

Ընտրված հեղինակներից Ա. Քարթերի և Ա.Ս. Բայեթի ստեղծագործությունների մասին գրված ատենախոսությունները և հոդվածները հիմնականում վերաբերում են այդ գրողների ստեղծագործության ժանրային, ոճական և լեզվական առանձնահատկություններին: Նշված հեղինակների երկերը՝ որպես մի երևույթ, որ ցուցադրում է լուրջ փոփոխություններ՝ պատմամշակութային, արժեքաբանական և մեկնաբանական-վերլուծական համակարգերի ներսում՝ տեսաբանների ուշադրության առարկա դեռևս չեն եղել: Դ. Բրաունի, Է. Գիլբերթի, Ջ. Փիքոլթի և Դ. Թարթի ստեղծագործությունների մասին մեզանում ընդհանրապես գիտական վերլուծություններ չկան, ինչպես նաև, երկու մշակույթների՝ անգլիական և ամերիկյան գրականությունների ներկայացուցիչ կին գրողների

գրական խոսույթի նմուշները չեն ուսումնասիրվել համեմատության մեջ: Ուստի ատենախոսության մեջ համեմատվում և վերլուծվում են տարբեր մշակույթների ներկայացուցիչ կին գրողների գրական-գեղագիտական-արժեքաբանական համակարգերը, ներկայացվում ընդհանրություններն ու տարբերությունները, և վերհանվում, թե թեմատիկայի, առաջադրված խնդիրների և անհատի արժեհամակարգի կողմնորոշիչների մակարդակներում ինչ համապատասխանություններ կարող են լինել տարբեր մշակութակիր գրողների և նրանց նախորդող գրողների երկերում, որն է ժամանակակից կին գրողների քայլը դեպի առաջ, և ինչ նորամուծություններ են նրանք ներկայացրել:

Նշված հեղինակներն ընտրվել են խորապես ուսումնասիրվելու համար, քանի որ նրանցից յուրաքանչյուրը կամ կարևոր ազդեցություն է ունեցել կանանց արձակի զարգացման ընթացքին, կամ նշանակալի ներդրում ունեցել դարի անցման գրականության մեջ:

Ուսումնասիրության **նյութի** ընտրությունը պայմանավորված է ոչ միայն խնդրո առարկա արժեքային հաստատունների ներկայությամբ այս երկերում, այլ նաև այդ երկերի գեղագիտության մեջ հեղինակային ինտենցիայի և դիտանկյան նորարարության կարևորման փաստով:

Ուսումնասիրության **առարկան** նշված հեղինակների ստեղծագործությունների արժեքային բովանդակությունը, անհատի արժեհամակարգի կողմնորոշիչներն են, դրանց ձևավորումը և գործառույթները: Գրական խոսույթների խաչաձևման արդյունքում ստեղծված արժեքների ընկալումը հնարավորություն է ընձեռում գրական տեքստերն ուսումնասիրել ոչ միայն որպես ավանդական արժեքների՝ կարծրատիպերի փոխանցման ոլորտ, այլ նաև որպես արժեքային բազմազանության մշակութային կառույց, բազմազանություն, որը չափազանց կարևորվում է վերջին տարիներին:

Որպես աշխատանքի **մեթոդաբանական հենք** առաջարկում ենք տարբեր տեսաբանների՝ փիլիսոփաների /Պլատոն, Արիստոտել, Սոկրատես, Կանտ, Հեգել, Նիցշե, Մաքիավելի, Օրտեգա-ի-Գասետ և այլք/, հոգեվերլուծաբանների /Ֆրոյդ, Ֆրոմ, Վայնինգեր, Լական և այլք/, մարդաբանների /Մ. Միդ, Ք. Ֆոքս, Դ. Թանեն, Ե. Գոֆման, Ե. Մաքքոբի և այլք/, ֆեմինիստական գրականության տեսաբանների /Մ. Ուոլսթոնքրաֆթ, Է. Սիքսու, Լ. Իրիգարե, Ջ.

Միթչել, Բ. Ֆրիդան, Է. Շորէ, Ս. Դը Բովուար, Ն. Գաբրիլյան, Գ. Բրանդտ, Մ. Աբաշևա, Ս. Տյուսաբ և այլք/, գրականագետների /Մ. Բախտին, Գ. Կոսիկով, Վ. Լուկով, Գ. Անիկին, Յու. Շուրման և այլք/ ներկայացրած հենքային դրույթները:

Ատենախոսության **հայեցակարգային** ապարատը՝ գրականագիտական վերլուծության մեջ օգտագործելով «արժեք» հասկացությունը, որն առավելապես փիլիսոփայական կատեգորիա է՝ մենք հակված ենք ընդունել այն տեսաբանների հայեցակետերը, որոնք արժեքը համարում են նաև գրականագիտական կատեգորիա և որոնք այդ կատեգորիան սահմանում են որպես 1) որոշակի դարաշրջանի ընկալումներում որոշակի երևույթների համար «ընդհանուր գաղափար», 2) որպես «գործիք», որը հնարավորություն է ընձեռում դիտարկել գեղարվեստական աշխարհը՝ ազգային և մշակութային աշխարհի հետ միասնության մեջ:

Որպես ուսումնասիրության **տեսական-մեթոդական** հիմք և հասկացական ապարատ ընդունում ենք Մ.Մ. Բախտինի այն դրույթը, ըստ որի՝ «Յուրաքանչյուր տեքստ <...> առնչվում է *ճշմարտության, բարու, գեղեցկության, պատմության* հետ»[3]: Ըստ տեսաբանի՝ «*Ոչ մի ստեղծարար ակտ չի կարող գործ ունենալ արժեքների հանդեպ անտարբեր, պատահական և չկանոնակարգված նյութի հետ: Այն գործ ունի արդեն գնահատված և կանոնակարգված ինչ-որ բանի հետ, որի հանդեպ պիտի ձևավորի արժեքային իր դիրքորոշումը*»[4]: Այդպիսի գնահատված, կանոնակարգված մատերիա է գրական երկի գեղարվեստական աշխարհը, որը միտված է հեղինակային գնահատականների որոշակի սանդղակի վրա արժեքների որոշակի համակարգ ներկայացնելուն:

Արդ, աշխատանքում կիրառվում են ոչ միայն գրական քննադատության մեջ արմատացած գրականագիտական վերլուծության դասական մեթոդները (պատմահամեմատական, տիպաբանական), այլև առաջարկվում է հեղինակային տեքստի ընթերցման նոր մոտեցում: Մասնավորաբար, ընտրված է **արժեքաբանական**[5] մոտեցումը՝ որպես արձակի գրական-

---

[3] Бахтин М. Проблема текста в лингвистике, филологии и других гуманитарных науках. Опыт философского анализа. //Эстетика словесного творчества. М.: 1986. С. 297-324.

[4] Бахтин М. Эстетика словесного творчества / Сост. С. Г. Бочаров, примеч. С. С. Аверинцев и С. Г. Бочаров. М.: Искусство, 1979. С. 169. http://teatr-lib.ru/Library/Bahtin/esthetic/

[5] Տես՝ Шохин В. Новая философская энциклопедия. В 4 т. / Ин-т философии РАН. Научно-ред. совет: В.С. Степин, А.А. Гусейнов, Г.Ю. Семигин/. М.: Мысль, 2010. Т. I, А - Д, С. 62.

գեղագիտական և հանրամշակութային առանձնահատկությունների վերհանման արդյունավետ միջոց՝ գեղարվեստական երկի վերլուծության և մեկնաբանման ավանդական մեթոդների և դրանց ընկալման արժեքային-գեղագիտական աղերսների համատեղմամբ: Կարծում ենք, այսօր անհրաժեշտություն կա ստեղծել գրականության արժեքաբանական վերլուծության մեթոդիկա, որը կխթանի նմանատիպ գրականագիտական հետազոտությունների իրականացումը և դրանց արդյունքների օգտագործումը՝ գրականության դասավանդման ժամանակ:

Վերլուծության արժեքաբանական տեսանկյունը գրականագիտության մեջ համեմատաբար վերջերս է մտել շրջանառության մեջ և այսօր զարգացման փուլում է գտնվում՝ «Գեղարվեստական արժեքաբանությունը, որպես արմատական, հիմնարար մեթոդաբանություն, ընդունում է փիլիսոփայական քննադատական մտքի գաղափարները, որոնք ենթադրում են գրողների ներկայացրած արժեքային կողմնորոշիչների մեկնաբանում՝ գեղարվեստական տեքստի ամենատարբեր մակարդակներում (սյուժե, կերպարային համակարգ, լեզու և ոճ) առկայայն «շինանյութի» հիման վրա, որի միջոցով արվեստագետը դարեր շարունակ փորձել է մերձենալ աստվածային աղբյուրներ՝ *գեղեցկության*, *բարության* և *ճշմարտության* գաղափարներին»[6]:

Աշխատանքն ունի երկու կարևոր **նպատակ**՝

- Կին գրողների արձակը տեղադրել ժամանակի սոցիալ-պատմական համատեքստում՝ կանանց արձակի ժամանակագրական զարգացումներում բացահայտելով նախորդ դարաշրջանների կանանց խոսույթին բնորոշ աշխարհընկալման և աշխարհապատկերման հայեցակարգը, նրանց տեքստերին հատուկ սյուժետային, թեմատիկ և խորհրդանշանային կառույցները, կերպարային համակարգերը, բացահայտել կին հեղինակների գաղափարախոսության գեղարվեստական մոդելի ձևավորման առանձնահատկությունները և նրանց ստեղծագործություններում առկա արժեքային հաստատունների ինքնատիպությունը՝ համեմատական հարացույցում:
- Ներկայացնել 20-րդ դարավերջին և 21-րդ դարասկզբին Անգլիայում և ԱՄՆ-ում ստեղծագործող կին գրողների երկերը և առաջարկել դրանց ընթերցման և

[6] Տե՛ս Терентьева Н. Аксиологический подход к изучению художественного мира литературного произведения в литературоведении и методике. Челябинский гос. пед. унив.//docplayer.ru/31671781-Aksiologicheskiy-podhod-k-izucheniyu-h..

մեկնաբանման նոր ուղիներ, վերլուծել դրանք արժեքաբանական դիտանկյունից՝ որպես ինքնատիպ երևույթ, որը բնութագրում է այդ դարաշրջանին հատուկ աշխարհայացքային, գեղագիտական և գեղարվեստական մոդուսը, վեր հանել այդ երկերում անհատի արժեհամակարգի կողմնորոշիչները, համեմատել դրանք և բացահայտել տվյալ գրողի ստեղծագործության գեղարվեստական-արժեքաբանական ինքնատիպությունը՝ ժամանակակից հասարակությունում կնոջ դերի վերաիմաստավորման և աշխարհի գեղարվեստական պատկերի վրա այդ գործընթացի ունեցած դերի կարևորության ֆոնի վրա:

Աշխատանքի նպատակը պայմանավորել է ուսումնասիրության **խնդիրները**՝

- ներկայացնել արժեքների տեսության և արժեքաբանության հիմնական դրույթները՝ կարևորելով այդ տեսությունների առկայացումը՝ կին գրողների ստեղծագործություններում արժեքային հաստատունների վերհանման խնդրում,
- ներկայացնել Անգլիայի և Ամերիկայի հասարակական, սոցիալական և հոգևոր կյանքի ընդհանուր ուրվագծերը, բարոյական և էթիկական հաստատունների զարգացման դինամիկան և հարացուցային փոփոխությունները,
- ներկայացնել կնոջ հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփաների, հոգեվերլուծաբանների, մարդաբանների և գրողների դիտանկյունները, վերլուծել խնդիրների այն հիմնական շրջանակը, որոնք աղերսվում են տարբեր դարաշրջաններում կնոջ դերի ու տեղի ընկալումների հետ,
- ներկայացնել նախորդ դարերի կին հեղինակների ստեղծագործությունների համառոտ բնութագիրը՝ որպես ժամանակակից կին գրողների երկերի վերլուծության հենք, բացահայտել «կանանց արձակի» զարգացման պատմական նախադրյալները, որոշարկել կին գրողների արձակի արժեքային կողմնորոշիչները՝ պատմական հարացույցում,
- վերլուծել 20-րդ դարավերջին և 21-րդ դարասկզբին անգլիական և ամերիկյան գեղարվեստական խոսույթում ներկա կին գրողների ստեղծագործությունները՝ պոետիկայի և գեղագիտության, գաղափարական-գեղարվեստական առանձնահատկությունների վերհանմամբ՝ կարևորելով դրանցում ներկայացված

արժեքաբանական հարացույցը, և, մասնավորապես, կնոջ դերն այդ հարացույցում,

- վեր հանել հեղինակների երկերում արժեհամակարգի արտահայտման կոնկրետ ձևերն ու մեթոդները՝ սյուժե, կոնֆլիկտ, կերպարներ և սահմանել այն միջոցները, որոնց շնորհիվ արժեքային կարևորագույն հասկացություններն այս գրողների գեղարվեստական աշխարհում արժեքային լիցք են ստանում,
- ուսումնասիրել անհատի արժեհամակարգի հիմնական կողմնորոշիչների առանձնահատկությունները ներկայացված կին գրողների գեղարվեստական արձակում, համեմատել նրանց արժեքաբանական համակարգերը՝ վեր հանելով նմանություններն ու տարբերությունները:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները՝

- Արժեքների հիմնական բաղադրիչները ներկայացված են բոլոր դարերի գրականություններում, սակայն տարբեր կերպ, տարբեր ըմբռնումներով և տարբեր աստիճանակարգմամբ:
- Կնոջ հիմնախնդիրը, որի համատեքստում նաև կանանց գրականությունը, դրա թեմատիկան, գեղագիտությունը, պոետիկան և ներկայացված արժեքային հարացույցը ենթարկվել են փոփոխությունների՝ պատմամշակութային հարացույցում:
- 20-րդ դարավերջին և 21-րդ դարասկզբին ստեղծագործող կին գրողների արձակը կարելի է դիտարկել որպես կանանց միասնական «արժեքային խոսույթ»՝ միավորված արժեհամակարգային այն խնդիրների համամասնությամբ, որը հատուկ է կանացիության ֆենոմենի ժամանակակից հարացույցին:

Աշխատանքի **տեսական նշանակությունը** որոշակվում է «արժեք» և «կանանց արձակ» հասկացությունների հստակեցման, կանանց արձակի արժեքաբանական հայեցակարգի, դրա նկարագրման մեթոդաբանության զարգացմանը նպաստելու փաստով, ինչպես նաև, հեղինակային պատումի որոշակի ռազմավարությունների վերհանմամբ, որոնց շրջանակներում ժամանակակից մշակույթում և գրականության մեջ առավել արդյունավետորեն կարելի է իրականացնել արժեքային բաղադրիչի և արժեհամակարգային կողմնորոշիչների բացահայտման և վերլուծության գործընթացը: Վերլուծության արդյունքում ստացված տվյալները կարող են հիմք ծառայել ինչպես «կանանց արձակի» և դրա

զարգացումների, այնպես էլ՝ գրական երկերի արժեքաբանական հայեցակարգի, համեմատական բնույթի հետագա ուսումնասիրությունների համար՝ նպաստելով գրական երկերի արժեքաբանական վերլուծության տեսության հետագազարգացմանը:

Հետազոտության **գործնական արժեքն** այն է, որ մշակվում է հետազոտական գործիքակազմ՝ գեղարվեստական երկերում առկա արժեքների ուսումնասիրության համար, ներկայացվում է մշակութային, գեղագիտական, գրականագիտական, բանասիրական ընդգրկուն նյութ՝ ամերիկյան, անգլիական, հայ գրականագիտության հատուկ դասընթացների համար, ինչպես նաև համեմատական գրականության վերլուծության մեթոդաբանություն, որը կարելի է օգտագործել նման այլ ուսումնասիրությունների համար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ներածության մեջ ներկայացվում է ուսումնասիրության հիմնաթեման, կիրառված մեթոդները, որոշարկվում են աշխատանքի նպատակն ու խնդիրները, տեսական և գործնական արժեքը, ինչպես նաև հիմնավորվում հետազոտության արդիականությունն ու նորույթը:

Առաջին գլուխը՝ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԿԱՆԱՆՑ ԳՐԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ, ներկայացնում է տարբեր փիլիսոփայական դպրոցների և տեսաբանների կողմից «արժեքների» տեսության և դրանց բնույթի մասին տարաբնույթ մեկնաբանությունները, ինչպես նաև անդրադառնում կնոջ հիմնախնդրին և կանանց արձակի զարգացման պատմական նախադրյալներին, համառոտ պատմական ակնարկ կատարում կին գրողների ստեղծագործություններին՝ սկսած անտիկ ժամանակներից մինչև 20-րդ դարի սկիզբը:

1.1 ԱՐԺԵՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Քաղաքակրթական փոփոխությունների ժամանակաշրջանում, երբ փոխվում են մարդու կեցության արժեքաբանական հիմքերը՝ անհատի կեցության կարևորագույն նախապայմաններից է դառնում նոր հենքային արժեքների փնտրտուքը, և այդ համատեքստում էլ ձևավորվում է փիլիսոփայական գիտելիքի մի ամբողջ բնագավառի՝ *արժեքաբանության*, դրա հիմնախնդիրների,

պատմական զարգացման և հիմնական միավոր՝ *արժեքի*[7] հանդեպ հետաքրքրությունը:

Մ. Մ. Բախտինի արժեքաբանական հայեցակարգի կարևորագույն սկզբունքն այն է, որ կեցության բոլոր բաղադրիչները ներծծված են արժեքային նշանակությամբ և յուրաքանչյուր կոնկրետ մարդ «արժեքային կենտրոն» է[8]:

1.2. *ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ-ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՐԱՑՈՒՅՑԸ*

Կարծում ենք, *արժեքը* կաղապարվում է երկու հիմնական չափումներում՝ մշակույթ և ճանաչողություն: Արդ, առաջարկում ենք արժեքի ընկալման հետևյալ մոդելը՝ արժեքը հավասար է մշակույթ՝ գումարած ճանաչողություն, և *մշակութային-ճանաչողական արժեքի* կազմության մեջ հարկ է ներառել առանցքային՝ կենտրոնական իմաստը, որը համընդհանուր է բազմաթիվ մշակույթներում և եզրային՝ երկրորդային իմաստները, որը բանաձևում է կոնկրետ, ազգային մշակույթի առանձնահատկությունները:

Մեր աշխատանքում առաջ է քաշվում այն վարկածը, որ արժեհամակարգային կողմնորոշիչները տարբերվում են ոչ միայն ըստ հեղինակի դավանած մշակութային արժեքների, այլ նաև ըստ նրա սեռային պատկանելության: Գեղարվեստական աշխարհի կառուցման մեթոդներում ներկայացվող արժեքային կաղապարները կին գրողների երկերի ընկալման կարևորագույն գործոններից են:

1. 3. ԿԱՆԱՆՑ ՀԻՄՆԱՀԱՐԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ

Ֆեմինիստական գրականագիտության տեսության հիմքերը դրվեցին երկու հիմնական՝ անգլաամերիկյան՝ **Մերի Ուոլսթոնքրաֆթ** (1759-1797), **Ջուլիեթ Միթչել** (1940-), **Աբիգեյլ Սմիթ Ադամս** (1744-1818), **Մարգարեթ Միդ** (1901-1978), **Բեթի Ֆրիդան** (1921-2006), **Սանդրա Գիլբերթ** (1936-) և ֆրանսիական՝ **Սառա Կոֆման, Լյուս Իրիգարե** (1930-), **Էլեն**

---

[7] Ժամանակակից տեսական գրականության մեջ *արժեք*[7] հասկացությունը սահմանվում է որպես «համընդհանուր նշանակություն ունեցող, որոշակի կոնկրետ պատմական կարևորություն ունեցող փաստ, մարդկային, սոցիալական և մշակութային նշանակություն ունեցող ցուցիչ, որը նշում է իրականության որոշակի երևույթներ, առարկաներ և հարաբերություններ, որոնց բազմազանությունը գնահատվում է *բարու և չարի, ճշմարտության և կեղծիքի, գեղեցիկի և տգեղի, արդարի և անարդարի, ընդունելիի և պարսավելիի* համատեքստում»: Տես՝ Новая философская энциклопедия. в 4 т. Т. 4 / Ин-т философии РАН. - М.: Мысль, 2009.

[8] Бахтин М. Проблемы поэтики Достоевского / М.М. Бахтин. - Изд. 4-е. - М.: Советская Россия, 2009. С. 124.

Սիքսու (1937-), **Սիմոնա դը Բովուար** (1908-1986) և այլ գրականագետների և դպրոցների կողմից: Ռուս կին գրողների գենդերային խոսույթն ուսումնասիրվում է Էլիզաբեթ Ծորէի աշխատություններում, որը կանանց հոգեբանության մասին աշխատանքների վերլուծությամբ առաջարկում է այն մեթոդիկան, որը կարելի է որդեգրել ժամանակակից կին գրողների տեքստերն ուսումնասիրելու համար: Հայ իրականության մեջ կանանց իրավունքների առաջին գաղափարախոսներից **Սրբուհի Տյուսաբը, Սիպիլը** և **Զապել Եսայանը,** արծարծելով սեռերի հավասարության հիմնահարցը, մեծապես բարձրացրին հայուհու հարգն ու վարկը:

Բոլոր այս կանայք իրենց երկերում և աշխատություններում արծարծում էին կնոջ ինքնության, հասարակական և անձնական կյանքում նրա ներկայացվածության հիմնախնդիրները, պայքարում կանանց իրավահավասարության համար, փիլիսոփայական, տեսական և գեղարվեստական մակարդակներում ներկայացնում կնոջ «եսի» առանձնահատկությունները և մշակույթով որոշված սեռային ինքնության կաղապարների տեսության ոչ արժանահավատ բնույթը:

Տեսաբաններից շատերը ֆեմինիստական գրական քննադատություն գիտակարգում առանձնացնում են երեք հիմնական տեսակ՝ *կանանց տեքստեր*, որ գրված են կին գրողների կողմից, *կանացի տեքստեր*՝ գրված այն ոճով, որ մշակութորեն սահմանված է որպես «կանացի» և *ֆեմինիստական տեքստեր*, որոնք գիտակցաբար մարտահրավեր են նետում գերակշռող հայրիշխանական գրական կանոնի կողմից սահմանված մեթոդներին, խնդիրներին և նպատակներին[9]:

1.4. ԿԱՆԱՆՑ ԳՐԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ՀԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄԱՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Արվեստում և գրականության մեջ կինը ներկա է եղել վաղնջական ժամանակներից, սակայն կանանց մասին պատմագրություն կամ կանանց գրական խոսույթի քննադատական գրականություն երկար ժամանակ գոյություն չի ունեցել: Ֆեմինիստական գրականագիտության ծնունդը փորձեց լրացնել այս բացը՝ որպես նպատակ նախանշելով կանանց գրականության պատմության ստեղծումը: Գրականագիտության մեջ ֆեմինիստական գիտահետազոտությունը ճյուղավորվեց

[9] Словарь гендерных терминов / Под ред. А. А. Денисовой / Региональная общественная организация "Восток-Запад: Женские Инновационные Проекты". М.: Информация XXI век, 2002. С 200.

երեք ուղղությամբ՝ կանանց արձակի հետազոտություն, ֆեմինիստական գրականագիտություն և «ապակառուցողական» ֆեմինիզմ[10]: Կանանց արձակի հետազոտություններում ուսումնասիրության օբյեկտ են դառնում կանանց ստեղծագործությունները և գրականության մեջ կանանց կերպարների մարմնավորումները, իսկ ֆեմինիստական գրականագիտությունը և ապակառուցողական ֆեմինիզմը զբաղվում են մեթոդական ու տեսական հարցադրումների և խնդիրների լուսաբանմամբ:

Մինչև ֆեմինիստական գրականության առաջացումը կանայք իրենց խոսքն են ասել նաև հին աշխարհում, երբ կրթությունը քիչ մարդկանց իրավունքն էր, և երբ այդ մարդկանց մեծ մասը տղամարդիկ էին: Այս կանայք՝ **Ինհեդուաննան** (մ.թ.ա. 2300/2350-2250), **Սապֆոն** Լեսբոսից (մ.թ.ա.610-580), **Կորիննան** (մ.թ.ա. 5-րդ դար), **Նոսիսը** (հարավային Իտալիա, մ.թ.ա. 300), և այլք[11] իրենց երկերում տղամարդու հետ կնոջ հավասարության դրության առաջին ծիլերն են նախանշել: Նրանց որդեգրած արժեհամակարգում առանցքային արժեք էր կինը՝ իր զգացմունքներով, խոհերով, ինչպես նաև տղամարդու հետ հավասար իրավունքների համար պայքարում իր հաստատակամությամբ:

Մի քննադատ հաշվել է, որ 1640-1700 թթ. մոտավորապես 300-400 կին գրել է, ոմանք կրոնական-քաղաքական, մյուսները՝ այլ թեմաներով: Մորիա Ֆերգյուսոնն իր «Առաջին ֆեմինիստները. Բրիտանացի կին գրողները, 1578-1799» անթոլոգիայում ներկայացնում է բրիտանացի կանանց գրվածքների երկդարյա պատմությունը[12]: Տարբեր ծագումով և դաստիարակությամբ այս կանայք՝ **Քեթրին Ֆիլիպ** (1631-1664), **Աֆրա Բենն** (1640-1689), **Մարգարեթ Քավենդիշ** (1623-1673), **Սառա Ֆայջ** (1669/72-1722/23)/ և այլք մերժում էին իրենց ենթակա կարգավիճակի ավանդական ընկալումները և ինքնվստահ հայտ ներկայացնում՝ գրելու ինքնատիպ, ինքնորոշված արձակ, որը հիմնականում ներկայանում էր ինքնակենսագրականի տեսքով: Նրանք գրում էին կանանց կրթություն ստանալու իրավունքի մասին, պայքարում հայրիշխանական հասարակության քարացած կանոնների դեմ:

18-րդ դարի Անգլիայի գրական ավանդույթը ներկայանում է նաև՝ Վ. Վուլֆի բնորոշմամբ՝ «անգլիական վիպագրության մայր»՝ **Ֆրենսիս Բըրնիի**

---

[10] Տես՝ ֆեմինիզմի տեսություն և պատմություն, Ե., 1999, էջ 23-49:

[11] Women Writers of the Ancient World: Sumeria, Rome, Greece, Alexandria By Jone Johnson LewisWomen's History Expert

[12] First Feminists: British Women Writers (1578-1799) Edited and with an introduction by Moria Ferguson, Indiana University Press, Bloomington. The Feminist Press. Old Westbury, New York, 1979.

(1752-1840) ստեղծագործություններով: Հեղինակը կարևորում է կնոջ համեստությունը, միամտությունը, տղամարդկանց վիրավորանքներին անխոս ենթարկվելը և նույնիսկ անպատասխան սիրո հմայքը: Արժեքային այս կողմնորոշիչների պրիզմայով էլ ներկայացվում են նրա վեպերի հերոսուհիները:

Բրիտանական քննադատական ռեալիզմի ներկայացուցիչներից մեկի՝ **Ջեյն Օսթինի** (1775-1817) դավանած արժեքներին են դասվում կնոջ և տղամարդու հավասարությունը հավաստող դրույթները: Իր արժեքային կողմնորոշիչները գրողը ներկայացնում է կանացի բազում «հիմարիկ» կերպարների միջոցով և առանձնակի կարևորում է կանացի երկու տիպ՝ զգացմունքային և ռացիոնալ:

Շարլոտ Բրոնտեի (1816-1855) հերուսուհին՝ Ջեյն Էյրը, որը դաստիարակվել էր ցանկացած անհնազանդություն պատժող միջավայրում, ակնհայտորեն գերազանցություն ունի շրջապատողների նկատմամբ, քանի որ բացահայտ և խիզախորեն պաշտպանում է իր արժանապատվությունը, սիրո և աշխատանքի իրավունքը: Ջեյնն ազատասեր, սակայն ոչ ազատամիտ կին էր, և նրա արժեհամակարգում կրկին առանցքային էին ընտանիքը, ամուսնությունը, սակայն հավասար իրավունքների վրա հիմնված:

Էմիլի Բրոնտեի (1818-1848) հայտնի «Մոլեգին հողմերի դարավանդը» (1847) վեպում արծարծված նախանձի, խանդի. վրեժի և մոլուցքի թեմաները մեծ ազդեցություն են ունեցել շատ գրողների վրա, որոնք իրենց երկերում կերտել են բազմաթիվ բարոյապես հավակնոտ հերոսներ և հերոսուհիներ:

Էնն Բրոնտեն (1820-1849) ներկայացնում է ճակատագրի անխուսափելիությունն ու սոցիալական անարդարությունները, արժևորում ընտանեկան կյանքը, ամուսնությունը, ծնող-երեխա հարաբերությունները և պատասխանատվության զգացումը: Նրա արժեքային կարևորագույն կողմնորոշիչներից են պարտքի զգացումը, մարդկային արժանապատվությունը, իսկ գերագույն ուրախությունը՝ օգտակար լինելու ցանկությունն ու հնարավորությունն է:

Ջորջ Էլիոթի (1819-1880) հերոսները Անգլիայի գյուղական վայրերի հասարակ մարդիկ են՝ ֆերմերները, հոգևորականները, ատաղձագործները, որոնց բարոյական բարձր հատկանիշները գրողը հակադրում է հարուստների այլասերված բարքերին: Էլիոթը ներկայացնում է կնոջ նոր տեսակ, որի սուր և խորաթափանց միտքը, ձգտումներն ու զգացմունքները նրան առանձնացնում են շրջապատից, որից էլ հենց բխում է կնոջ դժբախտությունը:

Ջ. Օսթինի, Բրոնտե քույրերի և այլոց հերոսուհիները դառնում են 18-րդ դարավերջի և 19-րդ դարի այն կերպարները, որոնք ներկայացնում են հին և նոր համակարգերի միաձուլումը, արժեքային նոր հաստատուններ որդեգրելու ուղին և դրա համար պայքարը, որն էլ պահանջում է մոտիվների և խորհրդանիշերի նոր համակարգ, որը կհամապատասխաներ ժամանակի տոնայնությանը: Նրանց հերոսները և, հիմնականում հերոսուհիները, հանդիպելով տարբեր հանգամանքների՝ ներքնապես վերափոխվում են և տեքստի հյուսվածքում դառնում այն «փոխաբերությունը», որը խորհրդանշում է նախկին արժեքների կորուստն ու նոր կյանքի սկիզբը:

Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր, Ժ. Պ. Սարտրի համախոհ **Այրիս Մըրդոքի** (1919-1999) ստեղծագործական փորձարկումները որոշակիորեն պայմանավորեցին պոստմոդեռնիզմի ձևավորման բրիտանական ազգային տարբերակի ձևավորումը: Այրիս Մըրդոքի «Ծովը, ծովը» (The Sea, the Sea) վեպը սիրո մոլուցքի, խանդի և մեղքի զգացողության մասին է: Մըրդոքն այստեղ ուսումնասիրում է արվեստագետ-արարողի կերպարը, բարու և չարի հիմնախնդիրը, իշխանությունից հրաժարվելու անկարողության, արվեստի և կյանքի փոխառնչությունների հարցերը:

Մյուրիել Սփարքի (1918-2006) աշխարհայացքի հիմքում հիմնականում քրիստոնեական բարոյախոսությունն է, և քրիստոնեական արժեքները նա հակադրում է ժամանակի անհոգի, ցինիկ բարքերին: Սփարքը փոխանցում է կեղծ արժեհամակարգի՝ նախապաշարումների, երեսպաշտության, քաղքենիության մթնոլորտը: Սակայն Սփարքի հերոսուհիները չեն ձգտում պայքարել իրենց իրավունքների կամ երջանկության համար, նրանք ապրում են շրջապատող անհոգի աշխարհի թելադրած կանոններով՝ դառնալով կեղծ մորալի զոհերը:

Ի տարբերություն Անգլիայի գրականության, որն ունի դարերի պատմություն, Ամերիկայի գրականությունը «ծնվեց այն ժամանակ, երբ տպավորվող և մեծ երևակայությամբ օժտված առաջին եկվորը մի պահ կանգ առավ և զգաց, որ գտնվում է անծանոթ երկնքի տակ, շնչում է այլ օդ, և որ իր առջև բացվել է Նոր Երկիր»[13]: Այդ ժամանակից ի վեր գրականության վաղնջական թեման՝ անիմանալի փնտրտուքների և ազատագրման թեմաները քաղաքակիրթ մարդու համար նոր իմաստ ստացան և նորովի ներկայացվեցին՝ նոր մայրացամաքի անծանոթ երևույթների հզոր ազդեցությամբ պայմանավորված: Նոր երկրի

[13] Литературная история Соединенных Штатов Америки. Том 1. Под ред. Р. Спиллера, У. Торпа, Т. Н. Джонсона, Г. С. Кэнби. Москва, “Прогресс”, 1977, С. 23.

գրականությունը ձևավորվում էր ոչ թե անցյալի հետ կապվածության, այլ ապագայի հանդեպ հույսի համատեքստում:

19-րդ դարի վերջում ամերիկյան գրականությունը հետաքրքիր ձեռքբերում ունեցավ **Քեյթ Չոփինի** (1850-1904) ծննդյամբ: Սեր և կիրք, ամուսնություն և անկախություն, ազատություն և անազատություն, փոռթկում և զսպվածություն. սրանք են նրա իրար հաջորդող պատմվածքների հստակորեն ընդգծված թեմաները: Իր «Զարթոնքում» (1899) Չոփինը ներկայացրեց Էդնա Փոնթելիենին՝ ազատամիտ և համարձակ կնոջ կերպար (որը, սակայն, չկարողացավ լիովին ազատագրվել հասարակական պայմանականություններից և ջրում «խեղդեց» իր ազատատենչ ձգտումները), և առաջին կին գրողն էր իր երկրում, որը կիրքն ընդունեց որպես գրականության «օրինական» արժեք:

Սքարլեթ Օ'Հարայի զարմանահրաշ կերպարը **Մարգարեթ Միթչելի** (1900-1949) «Քամուց քշվածները» վեպում բազմաթիվ կանանց թաքուն իղձերի կրողն է: Մ. Միթչելն ամերիկյան գրական հանրությանը ներկայացրեց ուժեղ, ինքնաբավ, համարձակ, հնարամիտ, անվախ և ազատամիտ կնոջ պատմությունը, որի արժեհամակարգը ձևավորվում էր ըստ իր պահանջների և ցանկությունների, և որը չէր ընկրկում ոչ մի դժվարության առջև՝ «դրա մասին մտածելով վաղը» և հաղթահարելով ամեն արգելք:

Եվ այսպես, մի քանի դարերի ընթացքում կանանց ազատնմուշի գրականություն է ստեղծվել: Կին գրողները մերժում էին դարերով իրենց վերագրված սահմանափակումները, ներկայացնում կնոջ նոր տեսակի կերպար և բանաձևում բարոյաէթիկական արժեքների այն բույլը,որը հետագայում դառնալու էր կանանց գրական ավանդույթի անբաժանելի մասը:

Առենախոսության երկրորդ՝ 20-ՐԴ ԵՎ 21-ՐԴ ԴԱՐԵՐԻ ԱՆԳԼԻԱՑԻ ԿԻՆ ԳՐՈՂՆԵՐԻ ԱՐՁԱԿԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՐԱՑՈՒՅՑԸ

գլուխը նվիրված է անգլիացի հայտնի գրողներ Անջելա Քարթերի և Անտոնիա Սյուզան Բայեթի ստեղծագործությունների արժեբանական վերլուծությանը: Անդրադարձ է կատարվում նաև կանանց կարծրատիպային կերպարներին և «Նոր կնոջ» կայացման նախադրյալներին:

2.1. ԿԱՆԱՆՑ ԿԱՐԾՐԱՏԻՊԱՅԻՆ ԴԵՐԵՐԸ ԵՎ «ՆՈՐ ԿՆՈՋ» ԿԱՅԱՑՈՒՄԸ

Ամենավաղնջական ժամանակների տեքստերից մինչև դասական գրականություն՝ գրողները կառչած են մնացել կանացի շատ կերպարային մոդելներից՝ որպես իրենց ուղեցույց: 17-18-րդ դարերում գրական երկերում

ներկայացվող կանացի կարծրատիպերը ներառում են՝ մայր, կին, սիրուհի/գայթակղիչ կին, սիրո առարկա, պառաված օրիորդ տեսակները: Տարիներ շարունակ, գրական խոսույթում կնոջ կերպարը կամ սրբացվում էր, կամ ներկայացվում որպես բացասական հատկանիշների մարմնացում: 19-րդ դարի վերջն ու 20-րդ դարի սկիզբն այն ժամանակաշրջանն էր, երբ պատմական և գրական հոլովույթներում սկսեց շրջանառվել «Նոր կին» (New Woman) արտահայտությունը: Կին գրողները հասարակության առաջարկում էին ոչ միայն նոր թեմաներ, այլ նաև վարքի նոր նմուշներ և մոդելներ, կողմնակից էին սեռերի հավասարության դրույթին և պաշտպանում էին կնոջ ինքնուրույն ընտրության և ինքնուրույն ճակատագրի իրավունքը:

21-րդ դարասկզբին ստեղծագործող կին գրողների երկերում առանցքային են դառնում անհատի արժեհամակարգի, հերոսների կողմից երևույթների հանդեպ գնահատականների փոփոխությունների, արժեքների վերագնահատման և նոր արժեքների փնտրտուքի թեմաները: Գրական կերպարը երբեմն ստեղծվում է ոչ թե պատրաստի արժեհամակարգի զոնայում՝ բարու, խելամտության, արժանավորի բնական ընկալումներին համապատասխան, այլ հանդես է գալիս որպես բարոյապես ինքնուրույն տարր:

Հանրային գիտակցության այս փոփոխված կառուցվածքը վերամշակվում է նաև կին ստեղծագործողների կողմից՝ համընդհանուր արժեքների, մարդու հիմնախնդրի, մարդկային փոխհարաբերությունների դիտանկյունից, որոնք իրացվում են ժանրային տարբեր ձևերում և գեղագիտական տարբեր սկզբունքներում: Եվ ժամանակակից անգլիական գրականությունն այսօր էլ հարուստ է վառ անուններով, որոնց շարքում առանձնացրել ենք իրենց ստեղծագործական մեթոդի և արժեքային կողմնորոշիչների ներկայացման ինքնատիպությամբ հայտնի կին հեղինակներ՝ **Անջելա Քարթերին** և **Անտոնիա Սյուզան Բայեթին**:

2.2. ԱՆՋԵԼԱ ՔԱՐԹԵՐԻ ՍԻՐՈ ԵՎ ԿԱՆԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Բավական բարդ է Անջելա Քարթերի ստեղծագործությունը դասել գրական որևէ ուղղության: Որոշ հետազոտողներ նրան համարում են «մոգական» ռեալիզմի ներկայացուցիչ, մյուսները հավաստում են, որ նրա վեպերը կարելի է դասել պոստմոդեռնիզմի բրիտանական տարբերակին, իսկ ամերիկյան և բրիտանական շատ գրականագետներ ուսումնասիրում են նրա ստեղծագործությունները՝ գոթական գրականության, ժառանգության, սյուրռեալիզմի, ֆենթըզիի և գիտական ֆանտասիկայի, գենդերային ինքնության և մարդկային

փոխհարաբերությունների վերլուծության դիտանկյունից:

2.2.1. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂՃԱՏՄԱՆ ԹԵՄԱՆ Ա. ՔԱՐԹԵՐԻ «ՍԵՐ» ՎԵՊՈՒՄ

Անջելա Քարթերի ստեղծագործությունը կարելի է բաժանել երեք հիմնական փուլի՝ ըստ գլխավոր հերոսուհիների տեսակի: Վաղ փուլը 60-ականներն են, երբ նրա հերոսուհիները ներկայանում են որպես զոհեր, 1970-ականները կարելի է համարել անցումային շրջան, երբ հերոսուհիները սկսում են իրենց ինքնության և կանացիության փնտրտուքները, իսկ 80-ականների սկզբի ստեղծագործություններում նրանք արդեն ձեռք են բերում առաջնորդի և դիկտատորի հատկանիշներ:

«Սեր» (Love) վեպի առաջին տարբերակը լույս տեսավ 1971թ., իսկ 1987թ. այն վերամշակվեց և վերահրատարակվեց: Ստեղծագործության մեջ հեղինակը բարձրացնում է չափազանց կարևոր հիմնախնդիրներ՝ աշխարհի գոյաբանական չկարգավորվածության արդյունքում ծնված անկայուն հոգեվիճակով հերոսները կարող են կյանքի հորձանուտում լողալ հոսանքին համընթաց, երբ առկա է հասարակության հոգեբանական անառողջ վիճակը, արռնկագրության արդյունաբերության բարոյական վնասի անբավարար գնահատականը, կնոջ և տղամարդու աղճատված փոխհարաբերությունները, ընտանիքի ինստիտուտի քայքայումը և այլն: Հընթացս Ա. Քարթերը կարևորում է անանց արժեքներ՝ սերը և ընտանիքը, և դրա ապացույցը վեպի վերջաբանն է, որտեղ գլխավոր հերոսներից «ամենանորմալը»՝ Լին ներկայացվում է երջանիկ ընտանիքում:

2.2.2. ԿԱՆԱՑԻՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՏԱՅՈԼՈՒՄՆԵՐԸ Ա. ՔԱՐԹԵՐԻ «ԳԻՇԵՐՆԵՐԸ ԿՐԿԵՍՈՒՄ» ՎԵՊՈՒՄ

Անջելա Քարթերի «Գիշերները կրկեսում» (Nights at the circus, 1984) վեպում խիտև բազմաբարդ են կերպարները՝ իրենց ֆիզիկական անսովոր կերպարանքներով և նուրբ հոգեբանական լուծումներով: Հենց այդպիսին է գլխավոր հերոսուհին՝ Ֆևերսը՝ լոնդոնյան մի կրկեսի օդային ակրոբատուհին, թևավոր մի արարած, կին հսկա (giantess)՝ շիկահեր, խոշորամարմին, վեց ոտնաչափ հասակով: Նրա մարմինը հանդես է գալիս որպես անվերջ հնարավորությունների ունակ, բացարձակ արժեք, իսկ թևերը նրան զանազանում են մյուսներից, օժտում վերերկրային ուժով:

Անջելա Քարթերի կերպարների արժեհամակարգային ցուցիչները կաղապարվում են մի քանի շերտում՝ սեր, խանդ, եսասիրություն, տուն, ընտանիք: Առանձնակի

գույներով են կերտված կին կերպարները, որոնք ներկայանում են ամենատարբեր մոդուսներում՝ սիրող կին, զոհ-կին, անտարբեր կին, բռնակալ և խանդոտ կին, առեղծվածային և խորհրդավոր կին: Իսկ սիրո և նսեմ կրքի միջև ընտրությունը հեղինակը լուծում է առաջինի օգտին՝ ընտանեկան հանդարտ երջանկությունը անսեր տարածքում աղոտ նշմարելի, սակայն սպասված և լուսավոր լինելիություն է:

2.3. ԱՆՏՈՆԻԱ ՍՅՈՒԶԱՆ ԲԱՅԵԹԻ ԲԱՆԱՒՐԱԿԱՆ ՎԵՊԻ ԱՐԺԵՔԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Անտոնիա Սյուզան Բայեթի «Հրեշտակներ և միջատներ» (Angels and Insects, 1992) երկերգությունը կարելի է դիտարկել որպես ինքնատիպ հորինվածքով երկ, որտեղ հեղինակը արծարծում է համամարդկային արժեքների հիմնախնդիրը, վերլուծում է կնոջ և տղամարդու փոխհարաբերությունների ամենատարբեր համակարգերը, ընտանիքը, ընկերությունը, հանրային մորալը և ներքին բարոյականությունը: «Հրեշտակներ և միջատներ» երկերգության մեջ գրողը ներկայացնում է արժեքային իր կողմնորոշիչները՝ դիմելով այլաբանության և մարդկանց փոխհարաբերությունները ներկայացնելով միջատների կամ հրեշտակների հետ համեմատության մեջ: «Մորֆո Յուջինիայում» (Morpho Eugenia) հերոսուհիները դասդասվում են մայր մեղուի և աշխատավոր մրջյունների, և միայն մտավոր բարձր ունակությունները կարող են հերոսուհուն վերափոխել ազատ մարդու, իսկ «Ամուսնության հրեշտակում» (The Conjugial Angel) սովորական մարդիկ են, որոնցից միայն մի քանիսն են ի զորու դառնալ կատարյալ, մոտենալ «թևավոր հրեշտակներին»՝ շնորհիվ կարեկցանքի զգացումի, փոխադարձ հանդուրժողության և կեցության յուրաքանչյուր օրն ուրախությամբ ընդունելու ունակության:

2.3.1. ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐԸ Ա. Ս. ԲԱՅԵԹԻ «ՄՈՐՖՈ ՅՈՒՋԻՆԻԱ» ՎԻՊԱԿՈՒՄ

«Մորֆո Յուջինիա» վիպակում վիկտորիանական ընտանիքում տիրող փոխհարաբերությունները գրողը համեմատում է միջատների վարքային մոդելների հետ: Վեպում ներկայացվում է երիտասարդ բնասեր Վիլյամ Ադամսոնի հարսնախոսության և ընտանեկան ոչ այնքան երկար կյանքի պատմությունը:

«Մորֆո Յուջինիայում» հիմնական կոնֆլիկտը ճշմարիտ և կեղծ արժեքների բախումն է: Հեղինակը բացահայտում է կերպարների արժեհամակարգի ամենատարբեր կողմնորոշիչների՝ սիրո և այլասերության, ընտանեկան շիտակ և կեղծ փոխհարաբերությունների, կեղծ

բարեպաշտության և անմեղության «սուրբգատի» համագոյությունը, ինչպես նաև գիտելիքի և մտավոր թռիչքի կարևորությունը: Առանձնակի կարևորություն է ստանում արվեստագետ-գիտնականի կերպարը, որը նյութական սուբստանցիայի փոխակերպումն է՝ հոգևոր արժեքների: Բայեթը կարևորում է կեցության ստեղծարար և ոչ թե կործանիչ դիտանկյունը:

2.3.2. ԿԻՆԸ ԵՎ ՎԻԿՏՈՐԻԱՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԸ Ա.Ս. ԲԱՅԵԹԻ «ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՀՐԵՇՏԱԿ» ՎԻՊԱԿՈՒՄ

«Ամուսնության հրեշտակ» վիպակը «Հրեշտակներ և միջատներ» երկերգության երկրորդ մասն է և թեմատիկորեն ասես կրկնորդում է երկերգության առաջին՝ «Մորֆո Յուջինիա» մասը: «Մորֆո Յուջինիայում» գաղափարախոսական քննարկումների թեման դարվինյան տեսությունն է տեսակների ծագման մասին, իսկ երկերգության երկրորդ մասում խոսքը Էմանուել Սվեդենբորգի հայեցակարգի մասին է, որի համաձայն՝ արժանավոր ամուսնական զույգերը երկնային կյանքում կազմավորում են ոչ թե առանձին, այլ միասնական ամուսնական հրեշտակ[14]:

Բայեթն իր երկերգությունում քննադատում է հասարակության թելադրանքը, որն ուղղված է մարդու, հատկապես կնոջ անձնական ազատության և զգացմունքների արտահայտման սահմանափակմանը: Նավեր է հանում կանանց և տղամարդկանց իրավահավասարության, ընտանիքում և երեխաների դաստիարակության խնդրում նրանց դերերի բաշխման, և առավել կարևորվող՝ ընտանիքի, սիրո և բարեկամության արժեքների վերաիմաստավորման հիմնախնդիրները:

Երկերգության մեջ զարմանահրաշ միթոպոետիկ ձևեր ստացած այլաբանությունների միջոցով ներկայացված անձն, տգեղ արտաքին աշխարհի ոգեղենացումը, ի վերջո, պիտի իրականանա մարդու կողմից, և այդ ընթացքը պիտի ավարտվի տղամարդու և կնոջ ներդաշնակ միության և սիրո կենարարության հաղթանակով:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 20-ՐԴ ԴԱՐԱՎԵՐՋԻ ԵՎ 21-ՐԴ ԴԱՐԱԿՁԲԻ ԿԻՆ ԳՐՈՂՆԵՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ,

[14] Ինքը՝ Է. Սվեդենբորգը՝ ամբողջ կյանքում ամուրի մնալով՝ ամուսնության խնդրին մեծածավալ մի գիրք է նվիրել՝ «Ամուսնական սեր» (Marriage Love, 1768):

նվիրված է 20-րդ դարավերջին և 21-րդ դարասկզբին ստեղծագործող ամերիկացի կին գրողների երկերին, որոնց ներկայացրած արժեքային կողմնորոշիչները տարբեր են նախորդ դարերի կին հեղինակների դավանած արժեքներից: Փոխվել է ոչ միայն արժեքային հարացույցը, այլ նաև այդ հարացույցը ներկայացնելու դիտանկյունն ու միջոցները:

3.1. ԱՄԵՐԻԿԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԻՆ ԳՐՈՂՆԵՐԻ ԲԱՀՄԱՀԱՅՆ ԱՐՁԱԿԸ

Ամերիկացի ժամանակակից կին հեղինակները գրում են համամարդկային այնպիսի արժեքների մասին, ինչպիսիք են բարին և չարը, արդարությունը, ճշմարտությունը, ընկերությունը, ազատությունը, նկարագրում կին վերաբնակների, տնային տնտեսուհիների և նրանց դուստրերի դառը կյանքն ընտանիքում, ներկայացնում ժողովրդի իմաստությունը, մշակույթը, կղզիների գեղեցկությունը, ներգաղթի և աքսորի տարբեր տեսանկյունները:

20-րդ դարավերջին և 21-րդ դարասկզբին ստեղծագործում է մի քանի տասնյակից ավել ականառու ամերիկացի կին գրող, և այդ ցուցակը գլխավորում է Ջոյս Քերոլ Օութսը:

Ջոյս Քերոլ Օութսը (1938-) մի գրող է, որի մասին պարբերաբար խոսում են որպես հիանալի կանացի ձայներ ստեղծողի, և դրա վառ օրինակն է նաև նրա վերջին՝ «Տուր ինձ քո սիրտը» (Give Me Your Heart) պատմվածքների ժողովածուն: Նրա **«Լույսի հրեշտակը»** (Angel of Light, 1981) վեպը հավատարմության, դավաճանության, վրեժի, և վերջապես, ներման պատմություն է: Այն նաև երիտասարդների օտարացման հոգեբանական հիմքերի, քայքայվող արիստոկրատական հանրության և բռնության անթաքույց արմատների միահյուսման պատմություն է:

Ամերիկացի ժամանակակից գրողների շարքում առանձնակի տեղ է գրավում աֆրոամերիկյան գրող **Թոնի Մորիսոնը** (1931-), որի **«Սուլա»** (Sula, 1973) վեպը նկարագրում է երկու հիմնական կանացի կերպարների կյանքը, նրանց քառասուն տարվա ընկերությունը և այն աֆրոամերիկյան համայնքը, որի դավանած արժեքների համաձայն էլ նրանք ընկալում են սերը, ատելությունը, վախը, մտերմությունը, դավաճանությունը և մահը: «Սուլան» հարուստ է մի շարք պարադոքսներով և հակադրություններով:

Թ. Մորիսոնի ուղերձը հետևյալն է՝ բարին և չարը խիստ հարաբերական և առաձգական հասկացություններ են, և

երբեմն դժվար է զանազանել՝ որն է բարին և որը՝ չարը, քանի որ դրանք հաճախ փոխատեղվում են: Այստեղ նաև հեղինակի խորհրդածություններն են՝ ընկերության, հավատարմության, դավաճանության, տառապանքի, հպարտության, կարեկցանքի, ներման, մտերմության, ընտրության անխուսափելիության մասին:

3.2 ԿՆՈՋ ԻՆՔՆԱԿԵՐՏՄԱՆ ՈՒՂԻՆ ԴԱՅԱՆԱ ԲՐԱՈՒՆԻ ՎԵՊԵՐՈՒՄ

Դայանա Բրաունը (1936-) ծնվել է Միացյալ Թագավորությունում, աշխատել եվրոպական շատ երկրներում և Հեռավոր Արևելքում, այնուհետև բնակություն է հաստատել Միացյալ Նահանգներում: Բրաունի վեպերում մարդկային փոխհարաբերություններն են, կնոջ ինքնագիտակցության բարձրացման հիմնախնդիրը:

«Կնոջ ձեռքը» (The Hand of a Woman, 1982) վեպում Դայանա Բրաունը մի տեղում է ամբարում նախորդ վեպերում արծարծած խնդիրները: Նա այս վեպը նվիրել է ազգությամբ հայ մեծ մորը՝ Աշխեն Դեվլիթին և անգլուհի տատին՝ Մեյզի Քլարքին: Վեպում պատկերվում է 19-րդ դարի Ամերիկան, Ամերիկայի հարավում բռնկված սարսափելի համաճարակը և պատմական այդ դրվագների համատեքստում էլ հյուսվում են գլխավոր հերոսուհու անձնական ու մասնագիտական կյանքի, ինքնակայացման դժվարին ուղու և սիրո պատմությունները:

Վեպում ամուսնության, սիրո, ընտանեկան և մարդկային փոխհարաբերությունների խնդիրը տեղափոխվում է բարոյաէթիկական արժեքների հարթություն: Գրողի ներկայացրած հասարակությունում ոչինչ չպետք է խոչընդոտի մարդկային վեհ զգացմունքներին, վսեմ սիրո թռիչքին, հարազատական կապվածության կայունությանը, ազնվագույն նախաձեռնություններին և խիզախումներին:

3.3. ԱՄԵՐԻԿՅԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ ԷԼԻԶԱԲԵԹ ԳԻԼԲԵՐԹԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Էլիզաբեթ Գիլբերթն առավելապես հայտնի է իր **«Ուտել, աղոթել, սիրել»** (Eat, Pray, Love) ինքնակենսագրական վեպով, որը լույս տեսավ 2006թ. և որն այնպիսի հանրահռչակման արժանացավ, որ *Time* ամսագիրը հեղինակին անվանեց աշխարհում ամենաազդեցիկ 100 մարդկանցից մեկը: 2010թ. Գիլբերթը հրատարակեց «Օրինական ամուսնություն» (Committed) գիրքը, որում նա հետազոտում է ամուսնության ինստիտուտի բազմիմաստությունը: Այս գիրքը նույնպես դարձավ Նյու Յորք Թայմսի համար առաջին բեսթսելեր (a Number One New York Times Bestseller) և արժանացավ քննադատների գովասանքներին:

3.3.1. ՀԱՃՈՒՅՔԻ, ՆՎԻՐՈՒՄԻ և ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ Է. ԳԻԼԲԵՐԹԻ «ՈՒՏԵԼ, ԱՂՈԹԵԼ, ՍԻՐԵԼ» ՎԵՊՈՒՄ

«Ուտել, աղոթել, սիրել» ինքնակենսագրական վեպը կյանքի իմաստի, ճշմարտության փնտրտուքների լաբիրինթոսում ինքն իրեն և իր երջանկությունը վերագտնելու հեղինակի տենչն է: Չորս ամիս Գիլբերթն անցկացնում է Իտալիայում՝ Հռոմում ծանոթանալով հաճույքների արվեստին և վայելելով տեղի սնունդը («Ուտել»), չորս ամիս՝ Հնդկաստանում՝ փնտրելով հոգևոր արժեքներ և սովորելով նվիրումի արվեստը («Աղոթել»): Տարվա մնացյալ մասը անցկացնում է Ինդոնեզիայում՝ Բալի կղզում, որտեղ կարողանում է գնահատել աշխարհիկ վայելքների և երկնային գերազանցության տարբերությունը, կարևորել հավասարակշռությունն գտնելու ընթացքը և, ի վերջո, գտնել իր կյանքի սերը («Սիրել»):

Գիլբերթի վեպում «ճանապարհի» տոպոսը ներկայանում է որպես ճամփաբաժան, որտեղ սկիզբ է առնում հեղինակի նոր կյանքի «սկիզբը» և որտեղ ծնվում է նրա նոր կենսափիլիսոփայությունը և արժեհամակարգը: Համեմատելով իր այցելած երկրների մշակույթները սեփական ինքնության բնորոշումների հետ՝ հեղինակն այդ «օտար» երևույթները «վերցնում է և դարձնում իրենը», արժևորում «ուրիշների» համար կարևորվող արժեքային հաստատուններն ու վարքային մոդելները և «տեղադրում» դրանք աշխարհի իր նոր պատկերում: Մեկ տարվա ճամփորդությունից հետո փոխվում է հեղինակի արժեքային հարացույցը՝ կարևորվում են այնպիսի արժեքներ, որոնք մարդուն դարձնում են երջանիկ, առողջ և հավասարակշռված:

3.3.2. ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ - ՍԵՐ - ԸՆՏԱՆԻՔ ԵՌԱՄԻԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ Է. ԳԻԼԲԵՐԹԻ «ՕՐԻՆԱԿԱՆ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ» ՎԵՊԻ

«Օրինական ամուսնություն» վեպը նույնպես ինքնակենսագրական է, սակայն պատումը համեմված է նաև հոգեբանական, հանրամշակութային և պատմական խոսույթների տարրերով: Վեպում նկարագրվող սիրո և ամուսնության մասին իր մտորումները ներկայացնելիս հեղինակը զուգահեռներ է անցկացնում սիրո, ամուսնության, ընտանիքի ամերիկյան ընկալումների, արևմտյան ժամանակակից մարդու բարոյական ճգնաժամի և Վիետնամի հեռավոր գյուղերի հովվերգական իրականության միջև: Ստեղծագործության ավարտին արագամատիկ, ինտելեկտուալ, մասնագիտության մեջ հաջողակ և իր արժեհամակարգում ամուսնությունը, սերն ու ընտանիքը գրեթե բացառող ամերիկուհին ամուսնանում է սիրած տղամարդու հետ:

«Ուտել, աղոթել, սիրել» և «Օրինական ամուսնություն» ինքնակենսագրական վեպերում առկայանում է այն թեզը, որ հեղինակի համար առաջնայնություն դարձած արժեքները երևակվում են այլ մշակույթում դրանց կարևորությունը փաստելու միջոցով: Է. Գիլբերթը ներկայացնում է այն երկրները, որոնք առաջարկում են արժեքների մի ամբողջ փունջ, որոնք թեպետ այլաշխարհիկ, սակայն արդեն ընդունելի արժեքներ են ամերիկուհու համար: Անկախ կնոջ ազատության նկրտումների հիացական զգացողությունները փոխարինվում են *առողջ, ամուր սիրո* և *ամուսնական անխախտ հարաբերություններ* ստեղծելու վճռականությամբ:

3.4. ԱՄԵՐԻԿՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՋՈԴԻ ՓԻՔՈԼԹԻ ՎԵՊԵՐՈՒՄ

Ջոդի Լինն Փիքոլթը գրական առաջին փորձերը, սեփական հիշողությունների համաձայն՝ կատարել է վաղ տարիքում: Նրա «Հրեշտակ քրոջս համար» (My Sister's Keeper, 2004) վեպը Մեծ Բրիտանիայում ճանաչվել է «Տարվա լավագույն ստեղծագործություն»:

3.4.1. ԲԱՐՈՅԱԷԹԻԿԱԿԱՆ ԵՐԿԸՆՏՐԱՆՔԻ ԹԵՄԱՆ Ջ. ՓԻՔՈԼԹԻ «ՀՐԵՇՏԱԿ ՔՐՈՋՍ ՀԱՄԱՐ» ՎԵՊՈՒՄ

Ջոդի Փիքոլթի **«Հրեշտակ քրոջս համար»** (My Sister's Keeper, 2005) վեպում նկարագրած ընտանիքում հիվանդության զոհեր դարձել էին բոլոր երեխաներն անխտիր: Ավագ եղբայրը՝ Ջեսսին, որին ծնողները դադարել էին ուշադրություն դարձնել հինգ տարեկանից սկսած՝ թողնված էր բախտի քմահաճույքին, Քեյթը լուրջ հիվանդ էր, իսկ Էենը ծնվել էր բացառապես այն պատճառով, որ դառնա դոնոր քրոջ համար: Վեպի հիմնական ինտրիգը պտտվում է իրավաբանական գործընթացի շուրջը, երբ Էենը դատի է տալիս իր ծնողներին, որպեսզի պահանջի իր առողջությանը վերաբերող որոշումներում ինքնուրույնության իրավունք:

Վեպում Ջոդի Փիքոլթն արծարծում է «լավ ծնող», «լավ քույր/եղբայր» հասկացությունների բարոյական դիտանկյունների կարևորությունը, իսկ վեպի հերոսները անանց վավերացումն են տառապանքի և հույսի, անտարբերության և ապրումակցման, և նրանց արարքների, խոհերի, ձախողումների և նվաճումների միջոցով հեղինակը ներկայացնում է աշխարհի անկատարությունն ու անարդարությունը:

3.4.2. ՆԵՐՄԱՆ ԵՎ ԳԹԱՍԱՐՏՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ Ջ. ՓԻՔՈԼԹԻ «ՊԱՏՄՈՂԸ» ՎԵՊՈՒՄ

«Պատմողը» (The Storyteller) վեպը գրվել է 2013թ.-ին և նվիրված է չափազանց ցավոտ թեմայի՝ հրեաների Հոլոքոստին և մեր օրերում այդ իրադարձության վերաիմաստավորմանը: Հոլոքոստի սարսափի տեսարանները, մահվան մեքենայի զոհերի դեմքերն ու անունները, որոնք ներկայացված են վեպի բնաբաններում՝ առավել ուժգնացնում են Փիքոլթի ներկայացրած հարցադրման կարևորությունը՝ մարդասիրության և պատասխանատվության արժեքների առաջնայնությունը՝ դաժան ու անիրավ իրականության համատեքստում: Վեպի պոետիկան անցյալի դաժան իրադարձությունների և ժամանակակից հոգեբանական ապրումների միաժամանակ հիշատակման վրա է հիմնված՝ ցավագին փորձությունները դառնում են ինքնահայման պատճառ և ծնում համապրման կեցություն, որն անհատի արժեհամակարգի առանցքային օղակներից է:

Ջոդի Փիքոլթի վեպերի առանցքում կարևորագույն խնդիրն է՝ թե երբ է բարոյական ընտրությունը դառնում բարոյական իմպերատիվ, և որտեղ է արդարության և պատժի, ներման և գթասրտության միջև սահմանը:

3.5. ԴՈՆՆԱ ԹԱՐԹԻ ՍՈՑԻԱԼ ԱԿԱՆ ԱՐՁԱԿԸ

Ժամանակակից ամերիկացի գրող Դոննա Թարթը 2014թ.-ին ընդգրկվել է «100 ամենազդեցիկ մարդկանց» ցուցակում, որը կազմվում է *Time* ամսագրի կողմից: Գրական շատ թեմաներ են արտացոլված Թարթի արձակում՝ կապված սոցիալական շերտավորման և մեղքի, գեղեցիկի գեղագիտական ընկալումների հետ:

3.5.1. ԳԱՂՏՆԻՔԻ ԵՎ ՍԱՐՍԱՓԻ ՏԱՐՐԵՐԸ Դ. ԹԱՐԹԻ «ՓՈՔՐԻԿ ԸՆԿԵՐԸ» ՎԵՊՈՒՄ

Դ. Թարթի **«Փոքրիկ ընկերը»** (The Little Friend) վեպը լույս է տեսնում 2002 թվականին և անմիջապես դառնում բեսթսելլեր: Վեպի կենտրոնում տասներկուամյա Հարիեթի պատմությունն է՝ եղբոր մահվանից տարիներ անց: Ամբողջ վեպը եղբոր սպանության առեղծվածի բացահայտման, որոնումների մի ասք է, որի ընթացքում աղջնակը հասնել ու է իրականության վերաիմաստավորման և ինքնաճանաչման:

Չնայած աշխարհը, որը Հարիեթը բացահայտում է՝ չարագուշակ է և անիծված, այնտեղ չկա ոչ մի անիրական բան: Գիրքն աշխարհի անգութորեն հստակ հաշվարկումն է՝ ինչպիսին որ այն կա՝ գորշ, տգեղ, սարսափազդու, անհամոզիչ, որը ֆիլտրված է մանկական ընկալման վառ գույների և անհավանական պահանջների միջոցով:

«Փոքրիկ ընկերը» վեպը Ամերիկայի հարավի փոփոխվող ժամանակների, հնացած արժեհամակարգի, Միսսիսիպիի գաղտնիքների, ռասայական խտրականության,

տգիտության, ծնողների բացակայության կամ անօգտակարության, փլուզված ընտանիքի, թշվառության և սիրո մասին է: Այս վեպը ներկայացնում է դեռահասների աշխարհի հայտնությունները, վախի և կասկածների այն ուղին, որի միջով մարդը գտնում է ինքն իրեն և իր տեղն աշխարհում:

3.5.2. ԳԵՂԵՑԻԿԸ ՈՐՊԵՍ ԿՅԱՆՔԻ ՈՒՂԵՆԻՇ Դ. ԹԱՐԹԻ «ԿԱՐԿՐԱԿԱՏԱՐԸ» ՎԵՊՈՒՄ

Ամերիկացի գրող Դոննա Թարթի վերջին գրական նվաճումը և, ըստ որոշ քննադատների՝ գրողի «մագնում օպուսը»՝ 2013 թ. լույս տեսած **«Կարմրակատարը»** (The Goldfinch) վեպն է:

Սերը և գեղեցիկը ասես նյութեղենացված են «Կարմրակատարը» կտավի մեջ, որը պատկերասրահի աղետից հետո Թեոն փրկել էր և մինչև այն կորցնելը պահել իր մոտ՝ որպես նշան սիրո և գեղեցիկի:

Հեղինակը վեպում ներկայացնում է արժեքային կողմնորոշիչների իր տեսությունը: Դրանք են հիմնականում՝ մայրական սիրո և ջերմության անխախտ էությունը, անպատասխան սիրո և տառապանքների անանց ներկայությունը, մոլորված և միայնակ հոգիների համար արվեստի կենարարությունը: Իհարկե, սերն ու գեղեցիկն են, որ անընդհատ ներկա են ողջ վեպում՝ որպես հեղինակի և գլխավոր հերոսի կյանքի ուղենիշ, որոնց «նյութականացումն» է արվեստի գործը՝ «Կարմրակատարը» կտավը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով 20-րդ դարավերջին և 21-րդ դարասկզբին ստեղծագործող անգլիացի և ամերիկացի կին գրողների արձակում առկա անհատի արժեքային կողմնորոշիչները՝ հանգում ենք հետևյալ եզրակացություններին՝

1. Արժեքների հիմնական բաղադրիչները ներկայացված են բոլոր դարերի գրականություններում, սակայն տարբեր կերպ, և հեղինակի ինքնության խնդիրը չափազանց կարևոր է արժեքային կողմնորոշիչների ներկայացման առումով: *Բարու և չարի, ճշմարտության և կեղծիքի, գեղեցիկի և տգեղի, արդարի և անարդարի, ընդունելիի և պարսավելիի* արժեքային հարացույցը կին գրողների երկերի ընկալման կարևորագույն գործոններից է:
2. «Կին և հասարակություն» երկփեղկության փիլիսոփայական-հոգեբանական առանձնահատկությունները խարսխային այն հենքն են,

որի հիման վրա վերլուծվում է «կանանց արձակը»: Հանրության մեջ կնոջ դերի զարգացման հետ համընթաց առաջացել է «կանանց արձակ» սոցիալ-մշակութային երևույթը, որի առանձնացումը գրականության համատեքստում պայմանավորված է մի քանի գործոններով՝ հեղինակը կին է, գլխավոր հերոսը կին է, խնդիրները այս կամ այն կերպ կապված են կնոջ ճակատագրի հետ:

3. Մի քանի դարերի ընթացքում կանանց ազատ նմուշի գրականություն է ստեղծվել: Եթե նախորդ դարերի կին գրողների երկերում առաջնային էր կանանց ամենատարբեր առաքինությունների գովերգումը և տղամարդկանց հետ հավասար իրավունքների պահանջը, ապա 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին կին գրողները դուրս են գալիս ընտանեկան բանտերում կողպված կանանց կյանքն ու տառապանքները նկարագրելու շրջանակներից և հասարակությանն առաջարկում ոչ միայն նոր թեմաներ, այլ նաև վարքի նոր մոդելներ՝ պաշտպանելով կնոջ ինքնուրույն ճակատագրի իրավունքը:
4. Ներկայումս «կանանց արձակ» երևույթը ոչ միայն հաստատել է իր արդիականությունը, այլև հարստացրել է համաշխարհային և ազգային գրականությունները վառ հեղինակներով և հավաքել ընթերցողների ստվար լսարան: Եվ եթե նախորդ դարերում կային տարբերություններ կանանց և տղամարդկանց գրականությունների միջև՝ կերպարների, սյուժեների և արծարծած հիմնախնդիրների առումով, ապա 20-րդ դարավերջին և 21-րդ դարասկզբին նման համեմատության կարիքը չկա, քանի որ այսօր նաև կանայք են որոշարկում համաշխարհային գրական զարգացումների միտումները:
5. Ժամանակակից կին գրողներն իրենց գրական գործունեությունը կառուցում են անհատի գոյաբանական և հոգեբանական խնդիրների ուսումնասիրության հարացույցում, որի շնորհիվ վեպ են ներմուծվում զգացմունքային և արժեքային առանձնահատուկ չափումներ՝ ներկայացված աշխարհայացքային, գեղագիտական, գեղարվեստական նոր մոդուսով: Փոխվել է ոչ միայն արժեքային հարացույցը, այլ նաև այդ հարացույցը ներկայացնելու դիտանկյունն ու միջոցները:
6. Կին հեղինակների վեպերին հատուկ է պատմականորեն որոշակի պայմանավորվածություն ունեցող տիպաբանություն, կնոջ կերպարի կենտրոնական դերն ընդգծող հատկություն: Տարիներ շարունակ գրական խոսույթում կնոջ կերպարը կամ առաքինի էր կամ անբարո: Ժամանակակից կին հեղինակների ստեղծած

կանացի կերպարներն ավելի հասուն են, «նյութական», «մարմնական»: Նրանք տեղյակ են բարոյաէթիկական նորմերին, երբեմն նրանց բնույթն ու բարոյականությունը իրար հետհամերաշխեն, երբեմն էլ բարոյական պահանջները ծառայում են սոսկ որպես նրանց անձնական ձգտումների ծածկույթ, ավելին, նրանցից շատերն էլ գիտակցորեն մերժում են բարոյականության թելադրած կանոնները, և հաճախ այդ դոգմաները որոշիչ դեր չեն խաղում նրանց կյանքում:

7. Անգլիացի հայտնի գրողներ **Ա. Ս. Բայեթը, Ա. Քարթերը** և ամերիկացի կին հեղինակներ՝ **Ջ. Ք. Օութսը, Թ. Մորիսոնը, Դ. Բրաունը, Է. Գիլբերթը, Ջ. Փիքոլթը և Դ. Թարթը** կարևոր ազդեցություն ունեն կանանց արձակի զարգացման ընթացքին և նշանակալի ներդրում՝ 20-րդ դարավերջի և 21-րդ դարասկզբի գրականության մեջ: Նրանք լուսաբանում են ոչ միայն ժամանակաշրջանի կանանց հուզող կարևոր հիմնախնդիրներ, այլև ներկայացնում են համամարդկային արժեքների յուրովի մեկնաբանում: Այս գրողները չեն ստեղծում արժեքների փիլիսոփայական համակարգ՝ դասական իմաստով, սակայն իրենց վեպերում, կամա թե ակամա, ներմուծում են արժեքաբանական բովանդակություն՝ գոյաբանական-գիտակցական համատեքստում շեշտադրելով *անհատի բացարձակ արժեք* լինելու փաստը, *ազատության և պատասխանատվության, հավատի և անվստահության, սիրո և ատելության, գթասրտության և հանդուրժողականության, բարու և չարի, կյանքի իմաստի* տրվածքները:

8. Բարոյականության խնդիրը, որպես մարդկային փոխհարաբերությունների կայուն և հզոր արժեքային կառույց՝ ժամանակակից կին գրողների երկերի իմաստային կենտրոնն է, որտեղ սյուժետային գիծը ներկայացվում է իրական աշխարհում առկա լուսավոր և խավար ուժերի մշտական պայքարով: Նախկին կարծրատիպերի փլուզումը, մարդու հուսախաբությունները, ապագայի հանդեպ մտավախությունները և, միևնույն ժամանակ, անիմանալի ճանաչելու ձգտումը՝ պայմանավորում է նրանց գրականության ուղղվածությունը՝ իր ողջ հոգեբանական լիցքով հանդերձ՝ նոր գաղափարների, թեմաների, մոտիվների, և ամենակարևորը, նոր արժեհամակարգի ձևավորումը:

9. 20-րդ դարավերջին և 21-րդ դարասկզբին ստեղծագործող կին գրողների գեղարվեստական աշխարհում բոլոր գործող անձիք դիտարկվում են էթիկական արիզմայի միջոցով, և անկախ ներկայացվող ստեղծագործության ժանրային պատկանելիությունից՝ այդ գեղարվեստական աշխարհը մշտապես գտնվում է բարոյական հավերժ

արժեքների համակարգում, որոնք ներկայանում են *քրիստոնեական և դեմոկրատական,* հոգևոր, բարոյաէթիկական և գեղագիտական *(հավատ, սեր, գթասրտություն, հանդուրժողականություն, արդարություն, ազատություն, գեղեցկություն և այլն)* արժեքների համամասնությամբ, արժեհամակարգի սանդղակի վերին մասում է գտնվում արժեքների ավանդական եռամիասնությունը՝ *ընտանիքի, ազատության և սիրո* արժեքները:

10. Ժամանակակից կին գրողների երկերում մարդկանց վարքն ու արարքները գնահատվում են ոչ թե բարոյական պատրաստի նորմերի դիտանկյունից, այլ վեր է հանվում հենց այդ նորմերի երբեմն անկատար էությունը: Ներկայացված բոլոր հեղինակներն իրենց կերպարների միջոցով մերկացնում են նաև աշխարհի անկատարությունը, նորմերից շեղումը, որը, միևնույն ժամանակ, հնարավորություն է ընձեռում ավելի պարզ ու տարածական տեսնել հենց նորմը և արժևորել այն:
11. Տարբեր մշակույթների ներկայացուցիչ ժամանակակից կին գրողների գրական-գեղագիտական-արժեբանական համակարգերում առկա են թե՛ ընդհանրություններ և թե՛ տարբերություններ: Թեպետ այս կին գրողները չեն ներկայանում գրական հայացքների միասնությամբ, ստեղծագործում են ամենատարբեր ժանրերում և ոճերում, գեղագիտության և պոետիկայի, սյուժեների և կերպարային համակարգի անհամաչափ բաշխվածությամբ, այդուհանդերձ, բերված փաստարկներում որոշակիորեն միասնական են և ձևավորում են 20-րդ դարավերջի և 21-րդ դարասկզբի կին գրողների գրական ժառանգության ընդհանուր պատկերը և կանանց միասնական «արժեքային խոսույթը»:
12. Անգլիացի կին գրողների արժեհամակարգում առավել կարևորվում են *վիկտորիանական արժեքները:* Ներկայացնելով բարոյական նորմերի անկումը, ընտանեկան արժեքների արժեզրկումը, մարդու կյանքի անարժանությունը, մարդկանց եսակենտրոնությունը, սիրո և ազատության այլափոխությունները՝ Ա. Քարթերը և Ա.Ս. Բայեթը հաջողել են արտաքին ազդակներից պաշտպանել ավանդական մշակութային արժեքները՝ ընտանիքի, կնոջ և տղամարդու առողջ փոխհարաբերությունների, սիրո բերկրանքի հաստատունությունը:
13. Ամերիկացի կին գրողներն առավել կարևորում են ամերիկյան հիմնարար արժեքներ՝ *ազատությունը, հանդուրժողականությունը, համապրումը, անկախությունը*: Հեղինակներն ապահովում են իրենց հերոսներին անհրաժեշտ այն պայմաններով, որպեսզի

մարդու վեհ և ուժգին զգացմունքներն ի վիճակի լինեն ազատորեն արտահայտվել՝ հոգևոր և բարոյական զարգացման անսահմանափակ հնարավորություններին համապատասխան:

14. Ժամանակակից կին գրողների արձակում կան նաև ընդհանրություններ՝

- ինքնակենսագրական վեպերի և պատմվածքների միջոցով սեփական փորձն ու զգացողությունները, անձնական կյանքի և հուզական ապրումների թաքուն շերտերը ներկայացնելու փափագը,
- անհատի արժեհամակարգային կողմնորոշիչների բացահայտումը ամենատարբեր գրական հնարների միջոցով՝ միջտեքստայնություն, պարատեքստ, գրական անդրադարձեր, ճանաչողական փոխաբերություններ, կերպարների անունների և ամենատարբեր խորհրդանշանների իմաստաբանություն, սյուրռեալիստական հնարներ և այլն,
- կերպարների հոգեբանական վերլուծություն, գոյաբանական խնդիրների ներմուծում, կոնֆլիկտների ընդհանրություն՝ «ծնողական» մոտիվների առկայություն, «ծնող-զավակ», «կին-տղամարդ» աղերսների

վերլուծություն և դրանց բարձրացում՝ փիլիսոփայական-հոգեբանական մակարդակի,

- կերպարների անձնական և պատմական «վնասվածքների» հուզական և արժեքաբանական ներհայում՝ ոչ միայն հերոսի անհատական կեցության հյուսվածքում, այլ նաև համընդհանուր և համաշխարհային ամենատարբեր իրադարձությունների համատեքստում՝ Երկրորդ համաշխարհային պատերազմ, Հոլոքոստ, ժանտախտ, տեռորիստական գործողություններ և ցավագին այլ դրվագներ,
- նոր կերպարի ծնունդ, որը, կորցնելով կենսական դրույթների մեջ իր վստահությունը և վերապրելով դարերի սահմանագծին ապրող անհատի արժեքների անկայունությունը՝ իր մեջ համատեղում է անցյալի և ներկայի արժեքները, իր կորցրած արժեքային հաստատունները ենթագիտակցորեն հաշտեցնում այլ, ավելի կատարյալ արժեհամակարգի հետ:

15. Եվ ամենակարևորը, ժամանակակից կին գրողները արժևորում են կեցության ստեղծարար և ոչ թե կործանիչ դիտանկյունը: Ներկայացնելով կյանքի ու մահվան, հույսի և տառապանքի պայքարը, անկումների, դավաճանության, անզուսպ կրքերի, անպատասխան, մեղսալի կամ գռեհկացված

սիրո, կորստի ցավի և այլ զգացմունքների ու ապրումների անխտուսափելիությունը՝ նրանց հերոսները վերագտնում են իրական գոյաբանական արժեքների հմայքը: Այս գրողները հավաստում են, որ մարդու կյանքը բացարձակ արժեք է՝ տառապանքի իր «չափաբաժնով», բալասանի իրավունքով և երջանկության առանձնաշնորհով: Իսկ սերը և գեղեցիկը, ստեղծագործական արարումները, ընտանեկան հանդարտ երջանկությունը՝ թեպետ աղոտ նշմարելի, սակայն սպասված և լուսավորելիություն են:

Ատենախտության թեմայով հրատարակված հոդվածները

1. A Contrastive Linguo-Cultural Analysis of Concept *Bread* in English and Armenian // First International Workshop on Linguistic Approaches to Food and Wine Description, Madrid, 2010, էջ 233-242:
2. The Category of Politeness in English and Armenian // 5th International Symposium on Politeness, 2010, Basel, Switzerland, էջ 89–90 (համահեղինակ Ա. Տոնոյան):
3. Proverbs and Sayings from the Perspective of Cultural Identity // Studies on Science and Culture. Higher Linguistic Education from the Perspective of Reforms. New Approaches, Prospects, and Challenges. UNESCO-CEPES, Bukharest, 2011, էջ 57- 65:
4. The Notion of Cultural Identity in English and Armenian Phraseological Units Containing Names of Clothes // Բանբեր ԵՊԼՀ, 1 (19), Երևան, Լինգվահրատ., 2012, էջ 12-18 (համահեղինակ Ռ. Մուսեյան):
5. Формально-структурный анализ английских терминов словосочетаний лексико-семантической группы «дом-жилье»// Բանբեր ԵՊԼՀ, 1 (21), Երևան, Լինգվահրատ., 2012, էջ 82-90 (համահեղինակ Ա. Տեր-Պողոսյանց)
6. The Discourse of Gossip from Cross-Cultural Perspective // «Աստղիկ» /Գիրք թարգմանչաց/ հոդվածների ժողովածու, 22-23, Սահակ Պարթև հրատ., Երևան, 2012-2013, էջ 268-276 (համահեղինակ Ռ. Մուսեյան):
7. The Metaphor "Clothing is Human Character" in the Context of Armenian and British Cultural Identity // Сборник материалов международной заочной научной конференции «Культура, перевод, толерантность». Гуманитарный институт, Ставрополь, 2013, էջ 123-129 (համահեղինակ Ռ. Մուսեյան):
8. The Concept “Modesty” in the Context of British, American and Armenian Cultural Identity // Armenian Folia Anglistika, International Journal of English Studies (AASE), Yerevan, 1-2 (11) 2013, էջ 134-139:
9. «Ճակատագիր» հասկացության զուգադրական քննությունը անգլերենում և հայերենում // Բանբեր ԵՊԼՀ, 1(28), Երևան, Լինգվահրատ., 2013, էջ 14-27:

10. Some Lingvo-Cultural Abstractions of *Conscience* in English, Russian and Armenian // Բանբեր ԵՊԼՀ, 1(32/, Երևան, Լինգվա հրատ., 2015, էջ 159-164:
11. «Վրեժ» հասկացության լեզվականացման առանձնահատկությունները գեղարվեստական տեքստում // Բանբեր ԵՊԼՀ, 1(32), Երևան, Լինգվահրատ., 2015, էջ 165-174 (համահեղինակ Բ. Մարգարյան):
12. Модели взаимоотношений мужчины и женщины в «Морфо Евгения» А. С. Байетт, Филологические науки. Вопросы теории и практики, Тамбов: Грамота, 2016. № 9. Ч. 3., էջ 18-21:
13. Библейские мотивы в «Морфо Евгения» А. С. Байетт // Phylological knowledges, Scientific and practical journal, The science publishing centre Sociosphere-CZ», № 3, 2016, էջ 40-45:
14. Концепция дома в романе А.Картер «Любовь» // Phylological knowledges, Scientific and practical journal, The science publishing centre Sociosphere-CZ», № 4, 2016, էջ 48-53:
15. Ամուսնություն-սեր-ընտանիք եռամիասնությունը ըստ Է. Գիլբերթի «Օրինական ամուսնություն» վեպի// Բանբեր ԵՊԼՀ, 1(38), Երևան, Լինգվահրատ., 2016, էջ 206-212:
16. Սիրո և բարոյականության խնդիրները Ալիս Հովհաննիսյանի «Ճյուղեր և տերևներ» վեպում // Բանբեր, ԵՊԼՀ, 1(38), Երևան, Լինգվահրատ., 2016, էջ 213-226: (համահեղինակ Ա. Քալոյան):
17. Հաճույքի թեման Է. Գիլբերթի արձակում //Բանբեր, ԵՊԼՀ, 1(40/, Երևան, Լինգվահրատ., 2017, էջ 182-188:
18. Особенности поэтики романа Донны Тартт «Маленький друг» // Международный академический вестник, Уфа, №6 (18), 2016, էջ 48-50:
19. Полифония в романе Дж. Пиколт «Storyteller» (Уроки милосердия»), Современные тенденции развития, науки и технологий, 2017 № 1, часть 6//Периодический научный сборник (по материалам XXII Международной научно-практической конференции) г. Белгород, 31 января, 2017, էջ 36-38:
20. Արժեքային հաստատունները Դոննա Թարթի «Կարմրակատարը» վեպում // Բանբեր ԵՊԼՀ, 1(40), Երևան, Լինգվահրատ., 2017, էջ 189-194:
21. Концепция имени в романе Анжелы Картер «Любовь» // Сборник научных статей по итогам международной научно-практической конференции Современный взгляд на будущее науки: Приоритетные направления и инструменты развития, Санкт-Петербург, 2017, 27-28 января, էջ 24-27 (համահեղինակ Կ. Գուլանյան):
22. Женская проза в историческом контексте // Инновационное развитие, Международный научный журнал, г. Пермь, 2017, №2, էջ 68-69:
23. Проблема национальной идентичности в романе Джоди Пиколт «Уроки милосердия» // Научно-методический и теоретический журнал Социосфера № 1 , 2017, էջ 62-67:

24. Диктат общества и семейные взаимоотношения в «Ангеле супружества» А.С.Байетт // Развитие современной науки: теоретические и прикладные аспекты, выпуск 13, Пермь 2017, Ł ջ 81-83:
25. Аксиологическая парадигма в дилогии А.С. Байетт «Ангелы и насекомые» // LAP Lambert, Academic Publishing RU, 2017, 48 Ł ջ :

Егиазарян Гаяне Виуловна

Личностные аксиологические ориентиры в англо-американской прозе конца XX- начала XXI веков (на материале женской прозы)

Автореферат диссертации на соискание ученой степени доктора филологических наук по специальности 10.01.07- «Зарубежная литература».

Защита состоится 20 октября 2017г. в 12.30 на заседании специализированного совета ВАК 003 по специальности «Литературоведение» при Институте литературы им. М.Абегяна по адресу: ул. Григора Лусаворича, 15, Ереван,

РЕЗЮМЕ

Диссертация посвящена исследованию творчества английских писательниц А.Картер и А.С Байет и американских авторов Д.Браун, Э.Гилберт, Дж. Пиколт и Д.Тарт, с аксиологической точки зрения.

Актуальность исследования определяется прежде всего назревшей необходимостью научного определения понятий «женская проза» и «женская тема» в литературе, многовекторного анализа развития женской прозы, выявления и определения в современном литературоведении **личностных аксиологических ориентиров** в произведениях женщин-писательниц, важностью определения их места и роли в ценностной системе данного народа.

Научная новизна исследования заключается в том, что:

- впервые в литературоведении осуществляется попытка отдельного и сравнительного анализа идейно-художественного замысла, тематики и образной системы, символики и авторской системы ценностей в творчестве английских и американсих писательниц конца XX- начала XXI веков.

- аксиологический анализ произведений выбранных писательниц проводится на базе существующих теоретических и философских концептуальных подходов. Предлагается новая модель структуры основной категории аксиологии – понятие когнитивно-культурологической ценности.

Предметом исследования является аксиологическое содержание произведений указанных писательниц, личностные ориентиры системы ценностей, их формирование и функции.

В работе поставлены две основополагающие ***цели***:

- определить место женской прозы в социально-историческом контексте, выявляя в ее хронологическом развитии характерные для женского дискурса предыдущих эпох концепции мировосприятия и изображаемой художественной картины мира, присущие ей сюжетные и тематические конструкции, систему образов и символов, рассмотреть в сравнительной парадигме особенности художественного формирования идеологии женщин-писательниц и своеобразие ценностных констант в их произведениях.
- представить произведения, созданные на рубеже XX-XXI веков женщинами-писательницами Англии и США и предложить новые пути их прочтения и интерпретации, провести аксиологический анализ их творчества как своеобразного явления, характеризующего присущий этой эпохе мировоззренческий, эстетический и художественный модус, выявить в отобранных произведениях личностные ориентиры ценностной системы, провести их сопоставление с целью определения художественно-аксиологического своеобразия данного автора на фоне переосмысления роли женщины в современном обществе и важности ее влияния на художественное изображение мира.

Теоретическая важность работы заключается в уточнении понятий «ценность» и «женская проза», а также в значительном вкладе в методологическое развитие изучения особенностей аксиологической концепции женской прозы.. Данные, полученные в результате анализа, могут стать основой для дальнейших исследований «женской прозы» и этапов ее развития, а также – для сравнительного анализа системы ценностей в литературных произведениях, способствуя тем самым дальнейшему развитию метода аксиологического анализа в литературоведении.

Практическая ценность работы – в выработанном исследовательском аппарате для изучения системы ценностей в художественных произведениях, в привлечении богатого культурного, эстетического, литературоведческого, филологического материала, который может быть использован в курсе лекций по американской,

английской, армянской литературе, а также – в сравнительных литературоведческих исследованиях.

Диссертация состоит из введения, трех глав, заключения и списка литературы.

Первая глава – «ФИЛОСОФСКО-МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ОСНОВЫ АКСИОЛОГИЧЕСКОЙ ТЕОРИИ И ИСТОРИЧЕСКИЕ И СОЦИОКУЛЬТУРНЫЕ ПРЕДПОСЫЛКИ РАЗВИТИЯ ЖЕНСКОГО ЛИТЕРАТУРНОГО ДИСКУРСА» – посвящена проблеме ценностей, анализу посвященных ей теоретических положений представителей различных философских и литературоведческих школ. В этой главе обсуждаются также «женский вопрос» и исторические предпосылки возникновения и развития женской прозы, дается исторический обзор произведений авторов-женщин от античности до начала XX века.

Вторая глава – «ЦЕННОСТНАЯ ПАРАДИГМА АНГЛИЙСКОЙ ЖЕНСКОЙ ПРОЗЫ XX-XXI ВЕКОВ» – посвящена аксиологическому анализу произведений известных английских писательниц Анджелы Картер и Антонии Сюзан Байет. Обсуждаются также проблема стереотипности женских образов и предпосылки создания образа «новой женщины».

В третьей главе – «ОСОБЕННОСТИ АМЕРИКАНСКОЙ СИСТЕМЫ ЦЕННОСТЕЙ В ПРОИЗВЕДЕНИЯХ ПИСАТЕЛЬНИЦ КОНЦА XX-НАЧАЛА XXI ВЕКОВ» – проводится аксиологический анализ писательниц рубежа веков – Дж.К.Оутс, Т. Моррисон, Д. Браун, Э. Гильберт, Дж.Пиколт, Д. Тарт.

В ***Заключении*** подводятся научные выводы исследования.

Gayane Yeghiazaryan

Value Orientations of an Individual in the English-American Literature of the late 20th and early 21st century (based on the women writer's works)

Dissertation for obtaining the scientific degree of Doctor of Philological sciences, in the specialty 10.01.07 – “Foreign Literature”.

The defense of the dissertation is scheduled for 20 October, 2017, at 12:30 p.m., at the meeting of the Specialized Council of Literary Studies 003, at the Institute of Literature after M. Abeghyan, NAS, RA.

Address: Gr.Lusavorich Str. 15, Yerevan, RA.

SUMMARY

The dissertation aims at studying the axiological paradigm presented in the works of the late 20th and early 21st century English female writers A. Carter and A.S. Byatt and American women authors D. Brown, E. Gilbert, J. Picoult and D. Tartt.

The **relevance** of the research is due to the need for a multivectoral analysis of the "women's prose" and "women's theme" in literature, the proliferation of artistic and axiological conceptions of women's prose in the historical paradigm, the analysis of value orientations in women writers' works in the context of modern literary studies and the role of the given writers in the individual’s value system formation.

The **novelty** of the dissertation is conditioned by the fact that for the first time a separate and a comparative analysis of the late 20th and early 21st century English and American female writers is performed based on ideological-artistic thought, the thematic and image system, symbolism and the author's value system:

- different viewpoints of the theorists on the “women’s problem” and “women’s prose” are presented, the peculiarities of female prose are manifested, the works of the selected writers are compared with those of the female writers of the previous centuries, the similarities and differences are revealed,
- an analysis of axiological paradigm of the prose of the selected authors' works is presented on the conceptual basis and theoretical provisions by different theorists, antropologists and philosophers about values.

The **subject** of the study is the value content of the selected authors’ works, the characteristics of the individual's value system, their formation and functions. The perception of the values generated as a result of cross-cultural entities gives an opportunity to study literary texts not only from the viewpoint of traditional values, but also as a cultural structure of diversity, which is extremely important in recent years.

The work has two **objectives**:

- To identify women writers' prose in the socio-historical context, revealing the concept of the world outlook and perceptions typical to women's prose, their specific texts, thematic and symbolic structures, image systems, revealing the peculiarities of artistic design of women's ideology and the uniqueness of the value constants in their works in a comparative paradigm.
- To present the works of English and American female writers in the late 20th and early 21st centuries and suggest new ways of reading and interpreting these texts, analyzing them as a unique phenomenon characterizing the world-view, aesthetic and artistic modality of that era, to find out the characteristics of the individual's value system in those works, to compare them with the works of female writers of the previous centuries and to reveal the artistic originality of the modern writers, the role of these women in the re-interpretation of the world, and the importance of this role.

The dissertation consists of Introduction, Three chapters, Conclusion and the List of literature.

The first chapter - The Philosophical and Methodological Basis of the Axiological Theory and the Historical and Socio-Cultural Preconditions of Women's Discourse, is devoted to the problem of values, the appreciation of this notion by different philosophical schools and theorists. It also studies "women's problem" and the historical context of women's literature. A brief historical review presents the works of female writers, starting with the ancient times until the beginning of the 20th century.

The second chapter – The Axiological Paradigm of the English Female Writers' Prose, is devoted to the thorough analysis of the works of famous British writers Angela Carter and Antonia Susan Byatt. The description of women's stereotyped characters and the prerequisites for the creation of "New Woman" are also presented.

The third Chapter- The Peculiarities of Value System of American Female Writers of the late 20th and early 21st Centuries studies the value system presented in the works of American female writers J. C Oates, T. Morrison, D. Brown, E. Gilbert, J. Picoult and D. Tartt, depicts the universal system of values peculiar to these writers.

In the **Conclusion** the main outcomes of the research are presented.